№ 205 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 205

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պտտիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս պանվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома А. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Петербургъ՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Պոտիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Արևելեան-Ասիական Ռուսական Նաւագնացութեան
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳԾԻ ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն պ. պ. ճանապարհորդների, որոնք կամենում են գնալ Ամերիկա, որ Արևելեան-Ասիական Ռուսական Նաւագնացութեան ճանապարհորդական նաւագնացային տոմսակները վաճառվում են ԹԻՖԼԻՍՈՒՄ,
Ներսիսեան փողոցի վրա, № 2 տանը:

(օ.մ.) 916. 3—1

Հոկտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 3 բուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակարդոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. հուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀՏԵՍԻԱՆՔ:

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

I

Իտալական ներկայ արշաւանքը Թիւրքիայի բաժանման նախնական քայլերից մէկն է:

Եթէ այսօր Իտալիան ուզում է ժառանգել Տրիպոլիսի նման մի խոշոր ու ընդարձակ երկիր, որ մօտ մէկ միլիոն քառակուսի վերստ տարածութիւն ունի, ինչու նոյն ախորժակով Անգլիան չի վերցնի Արաբիայի մեծագոյն մասը, մանաւանդ այն, որը գտնվում է Պարսից Ծոցի շրջանում. ինչու միւս պետութիւններն էլ չեն պահանջի հաւասարակշռող ժառանգութիւններ:

Անշուշտ կը պահանջեն:

Եւ եթէ նրանք այսօր չեն իրագործի իրանց պահանջը, այդ կանեն վաղը, կանեն մի քանի տարիների ընթացքում, կանեն որոշ սիստեմով.

Թիւրքիայի անդամահատութեան այդ գործողութեան մէջ, անկասկած, էական դեր է կատարում պետութիւնների վաղուցվայ տենչը՝ ժառանգելու հիւանդ մարդու կալուածքի որոշ մասերը, բայց դրա արագացման նպաստեց և Նոր-Թիւրքիայի գործողների քաղաքական անփորձութիւնը և տհասութիւնը:

Ջանձրացած Հին-Թիւրքիայի անկարելի վարչութիւնից, Եւրոպան որոշ յոյսերով հանդիպեց Նոր-Թիւրքիայի սահմանադրական գործողներին:

Սակայն Նոր-Թիւրքիան չարդարացրեց Եւրոպական պետութիւնների յոյսերը:

Այն մեծ համակրութիւնը, որով վերաբերվեց Եւրոպան դէպի երիտասարդ-Թիւրքերի քաղաքական ասպարէզ դալը օսմանեան պետութեան մէջ, փոխարկվեց հիասթափութեան:

Եւրոպան յոյս ունէր, որ երիտասարդ-Թիւրքերը ընդունակ կը հանդիսանան կարգադրելու խելացի կերպով իրանց պետութեան ներքին գործերը և միևնոյն ժամանակ հեռու կը մնան արտաքին քաղաքականութեան սուր խնդիրներ շօշափելուց և յարուցանելուց:

Իրականութիւնը դժբաղդաբար հակառակը ցոյց տուեց: Երիտասարդ-Թիւրքերը անկարող եղան անդորրութիւն հաստատել պետութեան մէջ, և ահա մենք տեսնում ենք, թէ ինչպէս օսմ. պետութեան մէջ ապրող այս ու այն ազգային տարրը դժգոհ վիճակի մէջ են:

Սահմանադրութեան առաջին շաբաթների արբեցնող լուսնշաղի մէջ առաջին սևամորգ շանթերից մէկը եղաւ Ադանայի դժոխային արհաւիրքը, որ եկաւ խոցելու հայութեան սիրտը խորագոյն վէրքերով: Իսկ Թիւրքահայաստանի մէջ չիրագործվեցին հողային, վարչական, դատաստանական բարենորոգումները:

Այնուհետև սկսվեցին դժգոհութիւններ օսմանեան պետութեան մէջ ապրող միւս տարրերի մէջ:

Ցոյները, որոնք վերջին տարիներում չափազանց մօտեցել էին Թիւրքերին, սկսեցին սաստկել դէպի Նոր-Թիւրքիայի գործողները և քիչ մնաց, որ բռնկվի նոր պատերազմ Ցունաստանի և Թիւրքիայի միջև:

Հիասթափվեցին և մակեդոնացիները, որոնց համար խոստացված էին մի շարք բարեկարգութիւններ: Իսկ Ալբանիան, օսմ. վեհապետների կողմից սիրված, փայփայված այդ հաւատարիմ ճանաչված երկիրը, բարձրացրեց ապստամբութեան դրօշակ և չափազանց մեծ հոգսեր պատճառեց Բ. Դրան կառավարութեան:

Իսկ արաբների ապստամբութիւնը, դրուզների մէջ չը հանդչող յուզմունքները և ամբողջ երկրի մէջ տիրող խուլ դժգոհութեան արտայայտութիւնները ցոյց են տալիս, որ Նոր-Թիւրքիան անընդունակ հանդիսացաւ ներքին կարգ ու խաղաղութիւն տալ իր պետութեան, իր քաղաքացիներին, իսկ միևնոյն ժամանակ իր արտաքին քաղաքականութեան մէջ արտայայտած անվստահելի քայլերով՝ յարուցեց կասկածներ և երկիւղներ պետութիւնների մէջ: Թիւրքիայի գործողները կարծում էին, թէ իրանց խորամանկ խաղերով, դիւանագիտական ճարպիկութիւններով նրանք կարող կը լինէին բոլորին քնացնել և շահագործել, մինչդեռ հասան բոլորվին ուրիշ հետևանքների: Պետութիւնները հիասթափվեցին և տեսան, որ Նոր-Թիւրքիան ոտք է դրել վտանգաւոր հողի վրա, քայքայման ուղիների վրա: Եւ սկսեցին մտածել իրանց հասանելիք ժառանգութեան մասին:

Եւ ահա վերջին տարիների դէպքերը բացում են մեր առաջ Եւրոպական ծպտեալ արշաւանքի ծրագիրներ մեր առաջ:

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

19 սեպտեմբերի

Սալոնիկ.—Լուրերի համաձայն, Ղարա-Բուրնուի մարտկոցներին մօտեցել են իտալական նաւերը:

Քաղաքում մեծ յուզմունք է տիրում: Կազմվեց ազգային ինքնապաշտպանութեան կոմիտէ: Զինվում են կամաւորներ ամեն ազգութիւններից:

—

Կ. Պոլիս.—Իտալական դեսպանատան կազմի մեծ մասը մեկնեց շոգենաւով, հաւատարմատարը՝ ճեպընթաց գնացքով:

Մամուլը միաբերան ողջունում է Սայիդ փաշային:

Պրէվէզա ուղարկվեցին մեծաքանակ զօրքեր: Սպասվում է լուրջ ճակատամարտ իտալացիների հետ Դուրակցոյում:

Արաբ ցեղերը ամեն կողմից խմբվում են Տրիպոլիսը պաշտպանելու համար, որ դեռևս գրաւված չէ թշնամուց: Լուրերին նայած, իտալացիները գրաւել են Միսիլէնը:

Եանինայի վալին հաղորդում է, որ 1600 իտալացիներ իջել են Պրէվէզայի մօտերը:

Լուրերի համաձայն, մինիստրների խորհուրդը կարգադրել է զէնքի կոչել բեդիֆներին Փոքր-Ասիայի 16 շրջաններում: Ուրիշ աղբիւրից տեղեկացնում են, որ եղած է ընդհանուր մոբիլիզացիայի հրաման:

Ալբանիայում զօրահրամանատար կարգվեց Զէվադ փաշան:

Թիւրքական նաւատորմի 16 ռազմի նաւերից Դարդանել մտան 8, մինը գնաց Պօրտ-Սայիդ: «Խայրէդին Բարբարոսա» զրահանաւը տեղս եկաւ: «Սավահ» նաւին զօրքերով գերել են իտալացիները Ադրիատիկ ծովի վրա:

Լուրերին նայած, Թիւրքաց զօրքերը յարձակվել են Պրէվէզայում ապ իջած 1500 իտալացիների վրա: Տեղի ունի կռիւ:

Կաբինէտ կազմելու գործը դժուարութիւնների է հանդիպում շատերի հրաժարվելու պատճառով: Մի կողմից էլ դրութիւնը դժուարանում է երիտասարդ-Թիւրքերի միջամտութիւնից:

Սուլթանը Մարգարէի վերարկուն համբուրելու ուխտից յետոյ ընդունեց Քիամիլ փաշային:

Բ. Դուռը ստացաւ մեծ պետութիւններից պատասխան միջնորդութեան մասին իր ուղղած դիմումի համար: Բոլոր մեծ պետութիւնները խուսափում են միջամտութիւնից:

Այսօր մեծ պետութիւններին ուղարկվեց Սայիդ փաշայի մշակած նոտան: Ցիշելով նախկին նոտայի մասին, Թիւրքիան մատնանշում է, որ դեռ պատերազմ չէ սկսել և նորից խնդրում է դադարեցնել արիւնհեղութիւնը:

Սուլթանը ընդունեց գերմանական դեսպան Մարշալ ֆոն-Բիբերշտէյնին:

—

Հռոմ.—Ստեֆանիի ասելով, Պրէվէզայում իտալացի զօրքեր ափ իջեցնելու լուրերը միանգամայն սխալ են: Պրէվէզան կը մնայ Թիւրքական ականաւորների յարձակողական գործողութիւնների հիմնական կէտը ընդդէմ Իտալիայի ծովափնեայ առևտրի:

Ստեֆանին հաղորդում է, որ Դերնիի բաղիս-հեռագրական կայանը իտալական մի մարտանաւ քարուքանդ է արել: Թունիսի հետ Տրիպոլիսի հեռագիրը չէ գործում: Սեպտեմբերի 18-ին Տրիպոլի-Մալտա հեռագրագիծը չէր գործում վատ եղանակի պատճառով, հետևաբար Կ. Պոլսից եկող բոլոր տենդենցիոզ հեռագիրները սխալ են:

Ստեֆանիի տեղեկութիւնների համաձայն, ալբանական Բեզաղիէ և Մուրտա նաւամատոյցների ռմբակոծութեան տեղեկութիւնը անհիմն է:

Կանէայից հեռագրում են, որ Թիւրքաց փարոսների վարչութիւնը հեռագրով կարգադրեց հանդցնել բոլոր փարոսները Կրէտէի վրա: Ֆրանսիական, անգլիական, ռուսական և իտալական հիւպատոսները իբրև հովանաւորող պետութիւնների ներկայացուցիչներ իրանց պատասխանատուութեամբ քայլեր արին այդ կարգադրութեան դէմ և միաժամանակ դիմեցին իրանց կառավարութիւններին յետագայ հրահանգների համար:

—

Առզուստա (Սիցիլիա).—Տրիպոլիսից եկած իտալական «Կոտոիա» շոգենաւը յայտնեց, որ սեպտեմբերի 17-ին մինչև երեկոյեան ժամը 8-ը իտալացիները դեռ չէին ձեռնարկել ամրութիւնների ռմբակոծութեան, որպէս զի եւրոպացիները հնարաւորութիւն ունենային հեռանալ քաղաքից:

—

Մալտա.—Տրիպոլիսից 1300 փախստականներով եկող անգլիական «Կեսարի Դարտ» նաւը ստաց ճանապարհին փոթորկի պատճառով: Երեք օր շարունակ ճանապարհորդները ուտելիքի պակասութիւն են զգացել:

—

Պարիզ.—Իտալական դեսպանը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ իտալական կառավարութիւնը տեղեկացաւ, որ Թիւրքիան մտադիր է զօրքեր ուղարկել առևտրական նաւերով պատերազմական գործողութիւնների համար Իտալիայի առևտրական նաւերի ու ծովափի դէմ, այդ պատճառով կառավարութիւնը անհրաժեշտ գտաւ, հակառակ իր ցանկութեան, պատերազմական գործողութիւններ սկսել եւրոպական ջրերում, թէև ամբողջովին միանում է մեծ պետութիւնների ջանքերին՝ Բալկանում status-quo-ն պահպանելու հարցում:

—

Սոֆիա.—Քաղաքական շրջաններում մեծ անհանգստութիւն է տիրում Պրէվէզայում իտալական զօրքեր ափ իջեցնելու և պատերազմական գործողութիւնները Բալկանի վրա տարածելու լուրերից: Ազգային լրագիրները խստագոյնս քննադատում են Իտալիայի նախագուշացումը, որպէսզի բալկանեան պետութիւնները ոչինչ չանեն Բալկանում դրութիւնը փոխելու մտադրով, և նստան վիրաւորական են գրտնում Բոլգարիայի համար:

—

Լոնդոն.—(Ռէյտէր): Թիւրքաց դեսպանը յայտնեց Դրէյին, թէ մեծ պետութիւնների միջամտութիւնը ցանկալի է: Նոյնպիսի քայլեր Թիւրքիան արել է նաև ուրիշ մայրաքաղաքներում: Թիւրքիային տեղեկացվեց, թէ մեծ պետութիւնները առայժմ նման պահելու են խիստ չեզոքութիւն:

—

Պետերբուրգ.—Հռոմում պաշտօնավարող դեսպանը տեղեկացրեց իտալական կառավարութեան, որ նա յայտնում է, թէ՝ սկսած սեպտեմբ. 16-ից Տրիպոլիտանիի և Կիրէնայիկի ափերը Թունիսի սահմանից մինչև Եգիպտոս բոլոր նաւահանգիստներով, նաւամատոյցներով և նաւաձգերով գտնվում են իսկական բլոկադայի մէջ (պաշարում). ամեն մի նաւ, որ կը փորձէ այդ տեղերով անցնել, կը գրաւվի համաձայն միջազգային իրաւունքի:

Կ. Պոլսում գտնվող ռուսաց դեսպանը հաղորդում է, որ Թիւրքաց կառավարութեան կարգադրութեամբ, սկսած սեպտեմբերի 18-ից, բոլոր Թիւրքական փարոսները Միջերկրական ծովի վրա, սկսած Նագար հրուանդանից Դարդանէլում, նաև Ադրիատիկ և Կարմիր ծովերի փարոսները՝ չեն վառվելու:

—

Պիրէյ.—Ոստիկանութիւնը ձերբակալեց Թիւրքական առագաստաւոր «Սլիկերին» նաւը, որ կասկածվում էր Տրիպոլիսի համար զէնք բեռնելու մտադրութեան մէջ:

—

Կալկաթա.—Մահմէդականների ժողովը հեռագրով դիմեց Լոնդոն արտաքին գործերի մինիստրութեան խնդրելով, որպէսզի Մեծ-Բրիտանիան իբրև մի պետութիւն, որի մէջ ապրում են անհամեմատ մեծ թւով մահմէդականներ, կանգնեցնէ Իտալիայի յարձակումը: Մեծ վէզիրին հեռագրով խնդրվեց պաշտպանել իսլամի պատիւը:

—

Բերլին. — «Բերլիներ-Տագէբլատին» հաղորդում են Հռոմից, որ այնտեղ յամառ լուր է տիրում, իբր Գերմանիան միջնորդ է լինելու հաշտութիւն կապել տալու նպատակով և իբր պատերազմի շուտափոյթ աւարտման շանսերը բաւականին մեծացել են. Իտալիան համաձայնել է, որպէսզի Գերմանիան միջնորդի դեր կատարէ Տրիպոլիսը գրաւելուց և այդպիսով իր պրէստիժը բարձր պահելուց յետոյ:

—

Վիեննա.—«Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» հաղորդում է, որ Իտալիայի գործողութիւնները ալբանական ծովափին հակասում են իր յայտարարութիւններին: Վիէնայի քաղաքական շրջաններում ընդգծում են Թիւրքիայի գովասանքի արժանի հանդիստ ու խելացի վարմունքը: «Մօնտագս Բէվիւն» հրատարակել է հետևեալ գաղտնի յայտարարութիւնը. «Աւստրօ-Ունգարիայի հասարակական կարծիքը շատ քիչ բացառութեամբ մեծ ինքնազսպում է երևան հանում Տրիպոլիսի հարցում: Սակայն վերջինս անյապաղ կը չքանայ, եթէ կը շօշափվեն Աւստրօ-Ունգարիայի անմիջական շահերը»:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

19 սեպտեմբերի

Վիէննա.—Լրագիրները չափազանց յուզված են Իտալիայի գործողութիւններից Ադրիատիկի ափերին: «Բէյլսա-Պօստը» Իտալիայի վարմունքը անուանում է անխիղճ յանցանք ի դիմաց եւրոպական խաղաղութեան, որ խիստ վշտացրեց իր դաշնակից Աւստրիային: «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէն» աղաղութիւն է սպասում Գերմանիայի միջնորդութիւնից և յոյս է յայտնում, որ Եւրոպան չի կանգնի Իտալիայի կողմը:

—

Բելգրադ.—Թիւրքիան յայտնեց սերբական կառավարութեան, որ թոյլ չի տայ սերբական անասուն արտահանել Սալոնիկով Իտալիա: Այդ պատճառով իտալացի վաճառականները, որոնք այստեղ անասուններ են գնում, մեկնեցին Սերբիայից:

—

Հիսսարօն.— Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Օպօրտոյում կանանաւորվել են 150 մարդ, ի թիւս որոց 11 զինուորական: Ամենուրեք հանդիստ է: Միջոցներ են ձեռք առնված վարկաբեկված անձերի փախուստի դէմ:

—

Պետերբուրգ.—Ռուսաստանը պաշտօնապէս ճանաչեց պօրտուգալական հանրապետութիւնը:

—

Վարշավա.—Քաղաքի ծայրում երկու ընդհարում եղաւ հրէաների և մթերքների թանգութիւնից կատաղած բանուորների միջև: Անկարգութիւնները արագ ճնշեց ոստիկանութիւնը: Մեծ ու ջարդի մէջ վիրաւորվեցին երկու քրիստոնեայ և երեք հրէայ:

—

Լվով.—Տեղի ունեցան բողոքի բազմամարդ ժողովներ ընդդէմ կենսական մթերքների թանգութեան: Սոցիալիստները ցոյցի երթ կազմեցին կարմիր դրօշակներով ու երգով: Կարգուկանոնը չը խախտվեց:

—

Պարիզ. — Մինիստրների խորհրդում Դեսէլվը յայտնեց, որ ֆրանս-գերմանական բանակցութիւնները բաւարար կերպով առաջ են գնում:

Մարօկկոյի հարցի նկատմամբ համարեա վերջնական համաձայնութիւն է կայացած: Մնում են միայն մի քանի տարաձայնութիւններ, վերաբերեալ աւելի շատ բառերի, քան ձևակերպութեան: Բացի դրանից երկու կողմերը չեն թագցնում, որ Կոնգոյի հարցը աւելի փափկանկատ հարց է և աւելի դժուար լուծելի:

—

Կոպէնհագէն.—Բացվեց Փոլկէտինգի նստաշրջանը:

—

Սոֆիա. — Համայնական խորհուրդների ընտրութիւններին անցան 11 կառավարականներ, 9 սոցիալիստ, 10 ճնացած կուսակցութիւններից:

Արձակուրդի մէջ գտնվող բոլոր բոլգար դեսպաններին պատուիրագրվեց վերադառնալ իրանց պաշտօններին:

Մի աչքի ընկնող մակեդոնացի զինուորականի նախաձեռնութեամբ ստորագրութիւն է սկսված կամաւորների համար, որոնք կը կամենան մտնել իտալական զօրքերի շարքերը:

—

Բերլին. — Բէյխստագի նստաշրջանը բացվում է հոկտեմբերի 4-ին:

—

Անտվերպէն.—Շելդում փոթորկի ժամանակ խորտակվել են 80 նաւեր. կան շատ մարդկային զոհեր:

—

Բերլին.—Արժանահաւատ աղբիւրից տեղեկացնում են, որ գերմանական պատերազմական նաւեր պատերազմի թատերաբեմը ուղարկելու լուրերը անհիմն են:

—

Աթէնք.—Աթէնքի Հեռ. Գործ. տեղեկութիւնների համաձայն, Թիւրքաց հաւատարմատարը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ Ցունաստանը չը պէտք է անվստահութեամբ վերաբերվէ յունական սահմանագլխում կատարվող զօրքերի տեղափոխութիւններին, որոնք կատարվում են բացառապէս, ի նկատի ունենալով պատերազմական գործողութիւնները ընդդէմ Իտալիայի:

—

Բելգրադ.—Սերբիան վճռեց խուսափել այն ամենից, ինչ որ կարող է բարդութիւն ստեղծել Բալկանում:

—

Բուխարէստ.—Ի պատիւ ռուսաց նաւատորմի օֆիցէրների՝ զինուորական մինիստրը ճաշ տուեց:

—

Մէկսիկա.—Մադերօն ընտրվեց հանրապետութեան նախագահ:

—

Խանկու.—Չինական իշխանութիւնները նախազգուշացրին եւրոպացիներին, որ տեղս են եկել յեղափոխականներ: Չինական զօրքերը անյուսալի են. Հաղորդում են Խուբէյի նահանգի զինուորների անկարգութիւնների մասին:

Պէկին.—Գուանդան նահանգում անկարգութիւններ են պատրաստվում երկաթուղային հարցի հողի վրա։ Զենսիանի վիճակում անկարգութիւններ են բռնկվել խաշաղ ցանելը արգելելու պատճառով։ Անկարգութիւններ են սպասվում Խանկօում։

ՏՐԻՊՕԼԻՍԸ

Իտալիայի և Թիւրքիայի միջև կուսծաղիկ դարձած Տրիպոլիսը կամ Տրիպոլիտանիան ընկած է Աֆրիկայի հիւսիսում, Միջերկրականի ափով, արևելքից և արևմուտքից սահմանակից ունենալով Եգիպտոսը և Տունիսը, իսկ հարաւից՝ մեծ անապատ Սահարան։

Տրիպոլիսը, որ իր մէջ պարփակում է իսկական Տրիպոլիսը, նրանից դէպի հարաւ ընկած Ֆեզանը և արևմտեան աշխարհ Բարկան (Եգիպտոսի սահմանակից), ըստ նում է 1,033,000 քառակուսի վերստ տարածութիւն, երկու ու կէս անգամ գերազանցելով մեր Կովկասը, սակայն շատ նոսր աղգաբնակութեամբ՝ մօտ 1 միլիոն հոգի։

Պատմական ժամանակներում այս երկիրը պակտանելիս է եղել Կարթագենին, ապա անցել է Նումիդիային, յետոյ կազմել է Հռովմէական կայսրութեան նահանգը։ Արաբների յաղթող սուրը VII դարում այս երկիրը դարձրեց իսլամի սեփականութիւն, տալով երկրացիներին Մուհամմէդի կրօնը։ Այստեղից արաբները տիրեցին Մալտա և Սիցիլիա կղզիներին մինչև նորմանների երևալը։

Թիւրքիայի տիրապետութիւնը Տրիպոլիսում սկսում է 1551 թ.ից, երբ օսմանցիները խլեցին նրան սպանացիների ձեռքից։ Բայց սուլթանների իշխանութիւնը մինչև XIX դարը եղել է սոսկ անուանական։ Տրիպոլիսը հռչակ է ունեցել որպէս ծովային աւազակների անառելի բոյն, որ սարսափ է եղել Միջերկրականի վրա երթևեկող բոլոր նաւերի համար։ Աւազակների այդ բոյնը քանդելու համար անգլիացիները և մանաւանդ ֆրանսիացիները կազմել են պատժիչ արշաւանքներ։ Ֆրանսիացիք երկու անգամ քարուքանդ են արել երկրի ծովեզրեայ քաղաքը՝ Տրիպոլիսը, ստանալով տեղացիներից խոշոր պատերազմական տուգանք (1685 թ.)։ Տասնութերորդ դարի սկզբին Տրիպոլիսի վալի օսմանցի Համիդ փաշան ոչնչացնում է սուլթանների անուանական իշխանութիւնն անգամ և իրան հռչակում է երկրի տէր ու սկիզբ դնում Կարամանլը կոչված հարստութեան։ Թիւրքիան կրկին տիրանում է այս երկրին 1835 թ.։ Այդ օրվանից Տրիպոլիսը հաշվում է որպէս օսմանեան մի վիլայէթ (5 սանջակից բաղկացած) և մի միութեասրբգիլակ՝ Բենղազի (Բարկայի երկրում), միակ բեկորները երբեմն հզօր օսմանցիների Աֆրիկայի մէջ տիրապետութեան։

Թէև իտալացիք մի քանի ժամանակից ի վեր Տրիպոլիսն անուանում են «Իտալիայի աւետեաց երկիրը», սակայն այս աշխարհը շատ անհամբոյր է։ Երկրի մէջ կան մի քանի պտղատու հովիտներ, իսկ մեծագոյն մասը անջրդի անապատ է ներկայացնում։ Կլիման կօնտինենտալ է։ անձրևներ տեղում են միայն ծովափնեայ մասերում, իսկ երկրի խորքում տարիների ընթացքում պատահում է որ անձրև չէ գալիս։ Աղքատ է բուսականութեամբ և կենդանիներով։ Երկրում ցանում են ցորեն, գարի։ բուսնում են հարաւային պտուղներ՝ արմաւ, ձիթապտուղ։ Ծովեզրեայ ճահիճներից և լճերից ստացվում է ծծումբ, աղ և նատրոն։ Տնային կենդանիներից եղջիւրաւորները և ձին պատահում են միայն ծովի մօտ եղած տեղերում, մնացած երկրում՝ էշ, դմակաւոր ոչխար, այծ և ուղտ։ Երկրի մէջ պատրաստվում են կոպիտ բրդէ և բամբակէ գործուածքներ, գորգեր, կաշուեղէն, վարդի և ծաղիկների էսէնցիաներ։

Մէկ միլիոն, այն էլ նահապետական բնակչութիւն ունեցող երկիրը չէ կարող մի առանձին խոշոր առևտրական շուկայ ներկայացնել, և Տրիպոլիսը նշանաւոր է ոչ իր անմիջական առևտրով, այլ որպէս տրանզիտի ուղի Կենտրօնական Սուդանի համար։ Երկրի առևտուրը կատարվում է մօտ 280 նաւերի միջոցով, որոնց տոնաժը (բարձած բեռը) հաւասար է 250,000 տոննի (տոնը հաւասար է 60 պուդի)։

Երկրի մէկ միլիոն բնակչութիւնը կազմում են մաւրեր, որոնք ապրում են քաղաքներում և գլխաւորապէս պարապում են վաճառականութեամբ։ Բեդուինները՝ խաշնարածներ և նեգրեր՝ բոլորն էլ մուսուլման են։

Տրիպոլիսն իր մէջ հաշուում է միայն 3—4 նշանաւոր քաղաքներ։ դրանք են նաւահանգիստ Տրիպոլիսը 30—35 հազար բնակչութեամբ։ ունի 12 մզկիթ, մէկ յունական և մէկ կաթոլիկ եկեղեցիներ, մի քանի հրէական սինագօգներ։ Տրիպոլիսը ծովափնեայ բերդ է, թէև թոյլ զինած։ Բնակիչներից 8,000-ը հրէաներ են, իսկ 4—5,000-ը եւրօպացիներ (գլխաւորապէս իտալացիներ)։ Երկրի միւս նաւահանգիստը՝ Բենղազին է (Բարկայի երկրում)։ երկու ուրիշ քաղաքները՝ Մուրզուկը և Բիլման յայտնի են Սուդանի հետ ունեցած իրանց առևտրով։

Գ. Զ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 9 սեպտեմբերի

Գրել էի իր ժամանակին «Մշակին», թէ ինչպէս Դարալաք գիւղի կալուածատէրը անգթօրէն գիւղից դուրս էր քշել ասորի գիւղացիների հետ 25 տնւոր երկրագործ հայերին՝ չը խնայելով ոչ նրանց ընչաղուրկ վիճակին և ոչ տարիների ընթացքում թափած աշխատանքին, որոնց ալդիւնքի մեծագոյն մասը խլել է ինքը գիւղատէրը։

Անպատսպար դարալաքցիք միառժամանակ ապաստան գտան Միանդաբի Թաղիապատ գիւղում՝ սպասելով Թաւրիզի առաջնորդարանի կարգադրութեանը։ Թեմական կարապետ եպիսկոպոս և ռուսաց վաճառականապետ Զաքարիա Նազարբէկեան երկար ու ձիգ բանակցութիւններ վարեցին Թէհրանում Ֆարման-Ֆարմանի հետ, որ վերջինս իր գիւղերից յանձնէր դարալաքցոց բնակութեան տեղ և վարելահող։ սակայն բանակցութիւնները չուսեցան բաւարար արդիւնք, մինչև որ Թաւրիզ եկաւ շահզադէ Իմամ Ղուլի միրզան, իբրև փոխնահանգապետ։ Կարապետ եպիսկոպոսը դիմեց շահզադէին, որի միջնորդութեան հետևանքով՝ Թէհրանի կենտրօնական իշխանութիւնը կատարեալ հաւանութիւն տուեց Թաղիապատի սահմանակից Ադա անուն Խալիսա գիւղը վարելահողերով՝ Զրատա գետի ափում, տալ դարալաքցի գիւղացիներին։ Թէհրանի որոշումը պաշտօնապէս ծանուցված լինելով փոխնահանդապետ Իմամ Ղուլի միրզային և Միանդաբի դատաւորին, դատաւորն յայտնել է արդէն գիւղացիներին, նկարագրեց էջմիածնի դրութիւնը, խօսեց ճեմարանի մասին, ես տեսայ, որ նա պահպանել է իր հոգեկան և մտային բոլոր կարողութիւնները։ Գրասենեակի առաջ նստած, նա պարապում էր, առջևն և երկու կողմերին դարսած ունենալով մատեաններ, ձեռագիրներ։

— Ես խնդրեցի ձեզ, ընդհատելով ձեր աշխատութիւնը, սրբազան հայր,—ասացի ես։

— Ոչ։ ես, թէև կաշխատիմ առաւօտները մինչև կէսօր, բայց և այդ ժամուն կընդունիմ այցելուներս և բարեկամներս, որովհետև կէսօրէն յետոյ կելլամ շրջագայելու։ Բժշկիս պատուէրները ճշդիւ կը կատարեմ։ Ուրախ եմ զձեզ տեսնելուս համար։ Ես մէջտ կախորժիմ ազնիւ հակառակորդներէ, չեմ կընար հանդուրժել միայն գձուձ և ստոր հակառակորդները։ «Մշակ» լրագիրը, իմ վերաբերմամբ, կօրբեկտ եղաւ, թէև հակառակորդ։ միայն չախորժեցայ Մելեան քահանայի յօդուածներէն, վասնզի անունք զուրկ են bon-sens-է։

— Սրբազան,—պատասխանեցի ես,—«Մշակ» լրագիրը, ինչպէս գիտէք, իր ուղղութեան և դաւանած սկզբունքների պատճառով հնարաւոր չէ համարել ընդունել ձեզ իբրև կաթողիկոսական ընտրելի, բայց ընաւ չուրանալով ձեր անհատական և գրական արժանիքը, մանաւանդ խորապէս գնահատելով ձեր աշխատութիւնները եկեղեցական և ազգային մատենագիրութեան մէջ՝ չէր կարող ընաւ համակրել այն խուժանային ցոյցերին, այն եպիրելի յարձակումներին, որոնց ենթակայ եղաք դուք խուժանի և անմաքուր մամուլի կողմից, և խստիւ չը դատապարտել խուժանային ցոյցերը և յարձակումները, ինչպէս նա դատապարտեց Սուքիաս արքեպիսկոպոսի դէմ եղած անարգական ցոյցը, թէև «Մշակը» այդ արքեպիսկոպոսի նոյնպէս հակառակորդն է եղել։ Արդ, սրբազան, քանի որ չինեն իրանց բնակարանները գիւղում՝ ուր երկու տուն ևս թուրքեր կան, և սկսեն իրանց վար ու ցանը։

Դարալաքցիների սոյն ցաւն ևս մի կերպ դարման է ստանում, որով խեղճ վտարականները կը գիտակցեն ինչ անել իրանց խարխլած կացութիւնը մասամբ իւիք բարելաւելու համար։ Թաղիապատը կուսեհայ այսուհետև 25 տնւոր հայ աշխատաւոր հաւաքեան, որոնց հարկաւոր դէպքում չի խնայվելու մարդասիրական օժանդակութիւն Թաղիապատցիների կողմից։ Հայկազուն

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 24 օգոստոսի

Համիդեան կառավարութիւնը ջարդեր էր հրամայում Թիւրքահայաստանում, և մասսայական կոտորածներ լինում էին երբեմն այս, երբեմն այն նահանգում. իսկ սահմանադրութեան առաջացած բարիքը այն եղաւ, որ էլ մասսայական ջարդեր չեն լինում, զսնէ Ադանայի ջարդերից յետոյ, այլ հայերը սպանվում են հատ-հատ, երկուսով, հինգով կամ առ առաւելն տասնով. պէտք է խոստովանած, որ սա էլ պակաս բարիք չէ հայերին։

Անցեալ նամակով հաղորդել էի Ծոկու գիւղացի 2 հայերի սպանութիւնների մասին. այսօր էլ յայտնում եմ մէկ հայի սպանութիւն Կարճկան գաւառի Կութ գիւղում։ Քաջալերված Միր-Մհէի ու Սաիդ բէյի աւազակախմբերի անպատիժ մնալուց, մի նոր աւազակախումբ էլ առաջ է եկել Կարճկան գաւառում. սա կապարոցի Մամէի աւազակախումբն է, որ յենվել է Խիզանի շէյխ Սայիդ-Ալիին, կեցանցի Հաջի Մուսա բէյին և ուրիշ քիւրդ աղդեցիկների և գործում է։ Երկու ամիս առաջ յարձակում գործեց Քարվակ գիւղի վրա և 100-ից աւելի հրացաններ պարպելով հայերին սարսափեցրեց, Բէլու գիւղում վիրաւորեց երկու հայերի, ուրիշների վրա հրացան արձակեց, ինչպէս որ ժամանակին «Մշակում» գրել եմ։ Այն ժամանակ առաջնորդարանի բողոքի վրա կառավարութիւնը մի քանի ոստիկաններ ուղարկեց նոյն գաւառը՝ գլխաւորութեամբ Հաջի Մուսա բէյի և այդ պատճառով Մամէն մի ժամանակ դադարեցրեց իր գործունէութիւնը, իսկ այս անգամ կրկին սկսել է։ Օգոստոսի 12-ին նա գիշերով յարձակվում է յիշեալ Կութ գիւղի վրա. գիւղացի հայերը սարսափած փախչում են և ամեն մէկը միմի քարի կամ մացառի տակ թաքչում է։ զնդակների տարափը տեղում է գիւղի վրա, որոնցից մէկով սպանվում է նոյն գիւղացի մի հայ։ Նոյն աւազակումբը ձերբակալում է ուրիշ երկու հայ նաւավարների էլ, որոնցից մէկից տուգանք է վերցնում և արձակում, իսկ միւին տարել է և դեռ յայտնի չէ՝ սպանվել է թէ մնում է դեռ։

Զարմանալին այս դէպքերը չեն, այլ այն, որ երբ հայերը բողոքում են տեղիս միւդիրին և նա ոստիկանութիւն է ուղարկում քննութեան, սա գնացել և գիւղում ասել է, որ այս սպանութիւնը քիւրդերի գործը չէ, այլ հայ փափախլիների և կոմիտեների. նա աւելացնում է. «Ի՞նչ եղաւ, որ մի հայ էլ սպանվեց. մենք հօ մի գաւառ կրակի չենք տալիս մի հայի սպանութեան համար». իսկ գաւառի կառավարութիւնը վալին հեռագրել է, որ սպանութիւնը արել են հայ կոմիտէները, քիւրդերն էլ բողոք են տուել, որ հայ կոմիտէները զինված շրջում են գաւառում, որի համար իրանք քիւրդերը ահ ու դողի մէջ են։ Սրանք ի հարկէ յերբուված խօսքեր են ոճրագործ քիւրդերին արդարացնելու համար. չէ որ համիդեան կառավարութիւնն էլ այդ էր անում. երբ սի տեղ մէկ կամ աւելի հայեր սպանվում էին, իբրև կասկածելի բանտարկում էր դարձեալ հայերին, որպէսզի նրանց էլ այդ կերպով սպանի. թիւրք հոդեբանութիւնը նոյնն է ամեն տեղ և ամեն ժամանակ։

Տասնեակ տարիներից ի վեր Շահբաղի գիւղի հայերի հողերի մեծ մասը գրաւել է մի շէյխ, ձեռք բերած լինելով մի դատավճիռ, որը հայերը ընդունել են, բայց շէյխը դատավճռի տուած սահմաններից էլ առաջ է անցնում և գրաւել է այնպիսի հողեր, որոնք հարիւրաւոր տարիներից ի վեր հայերի սեփականութիւնն են եղած կառավարութեան արձանագրութիւններով և որոնց վրա անյիշատակ ժամանակներից ի վեր նրանք տնկել են այգիներ ու տիրապետել են, իսկ կառավարութիւնը ափ-աշկարա խլում է այդ անգիին տարածութեամբ հողերը և այդիները և տալիս է մի ինչ-որ շէյխի, չը ճանաչելով սահմանի ճշդումները, որ արել են նոյնիսկ կառավարութեան կողմից նշանակված հայ ու թիւրք քննիչներ՝ դրացի այլ գիւղերից։ Այս տարի գարնանը կառավարութիւնը, կարծես ուշքի գալով, կանչեց հայերին և ծանուցեց, որ ով որ կալուածական մուրհակ ունի, կարող է տէր լինել իր հողին, իսկ շէյխի եղբօրն էլ պատուիրեց, որ չը համարձակվի մօտենալ այն հողերին, որոնք հայերի սեփականութիւնն են, որովհետև շէյխը անցեալ տարի Մէկկէ ուխտ գնացած ժամանակ սպանվել էր։ Այս պատուէրի վրա հայերը սկսեցին վարել իրանց հողերը, բայց ահա փչեց մի ինչ-որ հակառակ հով, և այս անգամ կրկին նոյն կառավարութիւնը կանչել է հայերին և պատուիրել, որ ձեռնթափ լինեն իրանց նոյն հողերից, որովհետև «դուք թէև կալուածական մուրհակ ունէք, բայց դատարանի վճռով այդ հողերը շէյխին են պատկանում», իսկ շէյխն էլ դիմել է դատարանին և պահանջել, որ այն հայերը, որոնք իր հողերը առանց իր հրամանի վարել են, տուգանքի և պատժի ենթարկվեն, և անշուշտ դատարանը կը վճռի յօգուտ շէյխին և հայերին կը նստեցնի բանտ, ինչպէս շատ անգամներ արել է։ Ահա մի նմուշ էլ թիւրքական արդարութիւնից։ Մտրակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գիւղական գանեիկ ընթացքներից մինը

Հին-Նախիջևան, 11 սեպտեմբերի

Սեպտեմբերի 10-ին, գիշերվայ ժամը 11½-ին, Եամխանա գիւղի հօրիզոնը բոցավառվեց. հրդեհի բոցերը վիթխարի լեզուներով իրանց ահարկու գլուխները դէպի երկինք բարձրացրած ոչնչացնում էին նոյն գիւղի երկու ընտանիքների՝ Մնացական Մարտիրոսեանցի և Մանուկ Թումանեանցի դրամանոցներն ու խոտերի դէզերը. վառվեց առաջինի ամբողջ մարագը դրամանով և 1500 խուրձ խոտով, երկրորդի մարագը դրամանով ու մօտ 1000 խուրձ խոտով. իւրաքանչիւրի վնասը 200 ռուբլուց անցնում է. երկուսի էլ լծկան ու կթան անասունները մնացին սոված, մանաւանդ ներկայ ժամանակին, երբ խոտի կոս կոչեց զիս ուսուցչութեան էջմիածնի ճեմարանին մէջ, և ես պարտքս համարեցի հնաւանդել հայրապետի հրամանին, իբրև կարգապահ զինուոր, և առաջնորդական պաշտօնս ձգելով՝ ուսուցիչ ըլլալ։ Նոյնպէս՝ ես ինքս հետամուտ չեղայ պատրիարքութեան, բայց երբ ազգը կոչեց, այն ալ անանկ ծանր ժամանակներ, այսինքն հայկական ջարդերէն յետոյ, ես պարտքս համարեցի ընդունիլ և չեմ կարծեր, որ 12-ամեայ պատրիարքութիւնս վնասակար եղած ըլլայ ազգին. գոնէ իմ պարբերութեան օրով ջարդեր չեղան, ինչպէս եղան առաջ, բռնապետութեան օրով, և յետոյ՝ ազատութեան օրով, այն է՝ Ադանայի ջարդը։ Ես հիմա ալ հետամուտ չեմ կաթողիկոսութեան, բայց եթէ ազգը և եկեղեցին կոչեն զիս այդ պաշտօնին, չպիտի խուսափիմ, մանաւանդ որ կը ցանկայի քիչ մը կարգ և կանոն մացնել էջմիածնի մէջ և ամենայն հայոց հայրապետութեան ինկած հմայքը (պրէստիժը) քիչ մը բարձրացնել։ Բայց այս ալ ըսեմ ձեզ, որ աւելի ես ուրախ կըլլամ, եթէ չկոչեն զիս այդ պաշտօնին, որովհետև միջոց և հնարաւորութիւն կունենամ խաղաղութեան և հանգստութեան մէջ աւարտել իմ գրական քանի մը մեծ աշխատութիւններս, որոնք ինձի համար, համոզուած եմ, աւելի մեծ ու փառաւոր անուն կը ստեղծեն հայ պատմութեան և գրականութեան մէջ, քան իմ կաթողիկոսութիւնս։ Այս վերջին երեք տարուան ընթացքին մէջ իմ հրատարակած աշխատութիւններս անձնապէս ինձի համար աւելի մեծ վարկ և փառք ստեղծեցին, քան 12-ամեայ պատրիարքութիւնս։ Ուրեմն, իմ պատասխանս ձեր հարցին այս է. ես երբէք

նրա աշխատանքից ստացվող մթերքների գլուխը, ի հարկէ ամենաէժան գներով և կարճ ժամանակով, որի ուշացնելն էլ տուգանքի կենթարկվի ըստ պայմանագրութեան։

Գիւղացին ամաւոյ վերջում իր պարտքի դիմաց ամեն ինչ տանում-ամբարում է պարատիրոջ տունը։ Ձմեռը գալիս է, բայց գիւղացին զուրկ է թէ իր ուտելու հացից և թէ անասունների կերից. նա մի մասը պարտքին է տուել, մի մասն էլ ծախսել է միւս պէտքերը հոգալու։ Այժմ նորից գիւղացին կամ պարտքի տակ է ընկնում կամ ձեռքին եղածով գնում է քաղաք իր ծախած մթերքը եռապատիկ ու քառապատիկ գներով յետ գնելու։

Օրինակ՝ անցեալ ամառ մի սայլ խոտ տրվել է պարտքի կամ ծախվել է 8—10 բուբլով կամ պուդը 15—20 կոպէկով, իսկ անցնող ձմեռը խոտը յետ են գնել սայլը 30—35 բուբլով կամ պուդը 1 ր. 20 կոպ.։ Այս ամառ էլ ես տեսայ նոյն էժան գնով թէ ծախվելը և թէ պարտքի դիմաց տալը։ Այսպէս են և բոլոր մթերքների վերաբերեալ։

Աւելորդ չեմ համարում այստեղ նկարագրել գիւղացիներին շահագործող մի այլ երևոյթ, որ գործվում է պաշտօնական անձանց ձեռքով, որոնք երևի խուլ անկիւններում հանդամանքից օգուտ են քաղում։

Դալ-Մամեդլի երկաթուղային կայարանը շրջապատված է ինչպէս մեր, նոյնպէս և բազմաթիւ թուրք մեծ ու փոքր գիւղերով։ Բնական է, որ այդ կայարանը կենտրոն լինելով՝ մեր շրջանի բոլոր գիւղերի անունով գրված նամակները ստացվում ենայդ կայարանի նի միջոցով։ Վերջերս գործով գնացել էի Դալ-Մամեդլի կայարանը, ուր տեսայ ցոյց տրված պահարանում մի խուրձ նամակներ հին թերով մօտ 25—30 հատ։ Իմ հարցին, թէ ինչու այս նամակները տէրերին չեն հասցրել, պատասխանեցին, թէ որովհետև հաշվիչը իւրաքանչիւր փակ նամակին 5, իսկ բաց նամակին 3 կոպէկ է պահանջում, ապա թէ տալիս է նամակը. նամակները, որոնք ոչ գիտէ թէ որքան սրտատրոփ սպասողներ ունեն։ Մթէ սա էլ արհեստական թանգութիւն չէ գիւղացու համար։

Ղարադաղլու Կար. Ղազարեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

ԱՌԱՋԻԿԱՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

V *)

Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան

Ծնված 1860 թ.ին, եպիսկոպոս ձեռնադրված 1898 թ.ին, 51 տարեկան։ Շատ բան չը կայ ասելու Դուրեան արքեպիսկոպոսի մասին։ Ամենից աւելի յայտնի է նա իբրև ուսուցիչ և տեսուչ Արմաշի դպրեվանքի, ուր մեծ ազդեցութիւն է ունեցել իր աշակերտների վրա և կարողացել է շատերին երախտագիտութեան կապերով կապել իր հետ։ Ունի նաև մի քանի գրուածքներ ու բանաստեղծութիւններ։ Թիւրքահայ պատգամաւորները անցեալ ընտրութեան ժամանակ հաւատացնում էին, թէ Եղիշէ արքեպ. Դուրեանը մեծամեծ գրական գործեր ունի... չը հրատարակած... «անտուկներուն մէջ»։ Այդպիսի վկայութիւնների վրա հիմնվել մենք, ի հարկէ, չենք կարող, մանաւանդ որ շատ դժուար կը լինի որոշել «անտուկներուն մէջ» եղած գրական գործերի իսկական արժէքը, եթէ ընդունենք իսկ, որ նրանք յիրաւի գոյութիւն ունեն։

Իբրև վարչական անձնաւորութիւն՝ Դուրեան արքեպիսկոպոսը ցոյց տուեց իրան բոլորովին անկարող։ Բոլորիս աչքի առաջն են դեռ ևս նրա անաջող պատրիարքութեան ժամանակ տեղի ունեցած խեղկատակութիւնները, նրա յայտարարած հրաժարականը, նրա պատրիարքութիւնից, առանց լուրջ առիթի կրկին պատրիարքական գահ բարձրանալը և վերջին անկումը։ Այդ տխուր պատմութեան վրա աւելի երկար կանգ առնել չարժէ։ Արդարութիւնը պահանջում է միայն խոստովանել, որ Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը քաղաքացիական քաջութիւն ունեցաւ իր վերջնական հրաժարականի մէջ խոստովանելու, որ ինքը պատրիարքական պաշտօնը վարել չէ կարողացել։ Այդ անկեղծ խոստովանութիւնը որքան և պատիւ է բերում նրան իբրև անձնաւորութեան, որ իր կարողութեան ու ընդունակութիւնների չափը զգալ գիտէ, նոյնչափ էլ անհնարին է դարձնում այսուհետև այլևս նրա անունը որևէ վարչական պաշտօնի համար տալու։ Այդ պատճառով էլ նրա անունը յիշել կաթողիկոսական ընտրութիւնների առիթով՝ իբրև լուրջ թեկնածուի՝ չարամտութիւն է միայն։ Այդպէս վարվել կարող են միայն նրանք, որոնք ուզում են Դուրեան սրբազանին իրանց ձեռքին գործիք դարձնել հայրապետական գահի վրա։ Այդպիսի թեկնածութեան դէմ մենք բողոքում ենք հայ ժողովրդի և հայոց եկեղեցու շահերի տեսակէտից և խորապէս համոզված ենք, որ այս խնդրում մեզ հետ միացած է հայ ժողովրդի ամենասուրբ մեծամասնութիւնը։

* *

Վահրամ արքեպիսկոպոս Մանկունի

Ծնված 1846 թ.ին, եպիսկոպոս ձեռնադրված 1875-ին, տեղապահ պատրիարքութեան Կ. Պոլսի, 66 տարեկան։ Չեմ կարող չը յայտնել, որ ամենից աւելի զարմացնում է ինձ այս արքեպիսկոպոսի անունը կաթողիկոսութեան թեկնածուների շարքում լսելը։ Անշուշտ այդ հանդամանքի մէջ դեր է կատարում այն, որ Մանկունու անունը սերտ կերպով կապված է Գէորգ կաթողիկոսի անուան հետ, իսկ վերջինը իր մեծագործութեամբ անմահ անուն է թողել յետնորդների յիշողութեան մէջ։ Բայց Գէորգ կաթողիկոսի անուան ու յիշատակի վրա վստահացած՝ առաջ քաշել Մանկունու թեկնածութիւնը՝ կը նշանակէ չարաչար սխալվել։ Նախ և առաջ՝ Մանկունին անցած մարդ է, իր ուսումով, կրթութեամբ ու գաղափարներով պատկանում է անցեալ դարին և ոչ մի նոր գաղափար նրա գլխի մէջ տեղ գրաւել այլ ևս չէ կարող։ Թէ ինչ գաղափարների և հասկացողութեան տէր մարդ է Մանկունին, այդ երևում էր ընորոշ կերպով նրանից, որ եւրօպական ձայնագրութիւնը նա բոլորովին աւելորդ է համարում մեր մէջ և միանգամայն բաւական է գտնում հայկական ձայնագրութիւնը։ Այդ էլ ոչ թէ այն պատճառով, որ ծանօթ է խնդրին և մանրամասնին քննութեամբ այդ եղակացութեանն է եկել, այլ միայն նրա համար, որ հայկական կոչված ձայնագրութիւնը կապված է Գէորգ կաթողիկոսի անձի հետ։ Ապա՝ պէտք է ի նկատի ունենալ նաև այն հանդամանքը, որ Վահրամ արքեպիսկոպոս Մանկունին չափազանց, կարելի է ասել քարացած, պահպանողական մարդ է և՝ օրինակի համար՝ ամենևին չէ ընդունում հայոց եկեղեցու վերանորոգութեան, նոյն իսկ բարեկարգութեան պէտքը։

Այս բոլորի վրա աւելանում է նաև այն, որ Մանկունին երբէք իր կենքի մէջ իբրև առաջնորդ մի գիւղ անգամ չէ կառավարել, միշտ յոխորտացել է Գէորգ կաթողիկոսի անունով և ազդեցութեամբ և ապատանել է նրա ուրուականի ներքոյ։ Մանկունին, իբրև Օրմանեան արքեպիսկոպոսի նախանձոտ և ատելութեամբ լցված հակառակորդ, այժմ իշխանութիւն ունենալով ձեռքին և ամեն տարբերական արդարութիւն մոռացած՝ հալածել է աշխատում Օրմանեան սրբազաններին, որպէս զի վերջինիս թեկնածութիւնը հայրապետական ընտրութեան համար խափանել կարողանայ։ Եւ այնքան հեռու է գնում իր այդ հալածասէր քաղաքականութեան մէջ, որ ձգտում է ամենախեղճ միջոցներով վարկաբեկ անել նաև Օրմանեանի աշակերտ Բարգէն եպիսկոպոսին՝ ականջ կախելով անմիտ զրպարտութիւններին և այդպիսիք հրատարակել տալով թերթերի մէջ՝ առանց յետոյ պաշտօնական մարմինների կողմից ուղարկված նրանց հերքումն էլ տպագրել տալ բարեհաճելու։ Եւ այդ բոլորն ինչու համար, որովհետև Բարգէն եպիսկոպոս Կիւլեսերեանի անունը տրված է իբրև թեկնածու պատրիարքական աթոռի։

Վերև նկարագրած աշխարհահայացքի և բարոյական սկզբունքների տէր անձնաւորութիւնը չէ կարող յաւակնել հայրապետական աթոռի թեկնածու լինել։ Մենք արդէն շեշտեցինք նախորդ յօդուածներում, որ ապագայ կաթողիկոսի ամենաանհրաժեշտ յատկութիւնը ժամանակակից քրիստոնէական աշխարհահայացքն ու մաքուր բարոյական սկզբունքներն են լինելու, որոնց համաձայն նա պիտի դատարկէ իր խնամքին ու հովութեանը հաւատացված բանաւոր հօտը։ Այդ պահանջներին անհամապատասխան է Վահրամ արքեպիսկոպոս Մանկունին իր հնադարեան գաղափարներով, ձեռնարկութիւնից բոլորովին զուրկ ոգով ու կասկածելի շարժառիթներով առաջնորդվող բարոյական սկզբունքներով։

Երուանդ Տէր-Մինասեան

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Կովկասի Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլովը ծառայութեան գործերով մեկնեց Հիւսիսային Կովկաս։

✦ Երէկ տեղի ունեցաւ Յովսէփ Մելիք-Բէգլարեանի թաղումը, որին ներկայ էին հանգուցեալի յիշատակը յարգող մեծ բազմութիւն դումայի ձայնաւորներից, մանկավարժներից, հանգուցեալի նախկին սաներից և քաղաքային վարչութեան բոլոր անդամները, որոնք և քաղաքի կողմից պսակ էին դրել ենթեցեալի դագաղի վրա։ Քաղաքային ձեռագործի դպրոցում հաստատվում է մի թոշակաւորի տեղ հանգուցեալի յիշատակի յաւերժացման նպատակով։

✦ Թիֆլիսում բանտարկված՝ «Դաշնակցութեան» մէջ մեղադրվողներից շատերը իրանց դատի առիթով փաստաբաններ են վարձել գլխաւորապէս մայրաքաղաքի յայտնի իրաւաբաններից։ Այդ իրաւաբաններից մի քանիսը գալիս են Թիֆլիս ծանօթանալու համար իրանց կլիէնտների գործի մանրամասնութիւնների հետ։ «Դաշնակցութեան», գործը ինչպէս հաստատ որոշված է, կը քննվի Պետերբուրգում։ Նովոյէ Վրեմյա կամ Եկատերինոդարում չը նշանակելու մի պատճառ ևս հանդիսանում է այն, որ յիշեալ քաղաքներում չը կայ յարմար, ընդարձակ դահլիճ, ուր կարելի լինէր տեղաւորել յիշեալ գործով հետաքրքրվողների չափազանց մեծ բազմութեան։ Պետերբուրգում դեռ վերջնական որոշված չէ գործը դռնփակ թէ հրապարակով կատարելու հարցը։ Բացի դրանից, վիճաբանութիւնների առարկայ է դեռ գործը այս տարվայ նոյեմբերը կամ դեկտեմբեր ամիսներում նշանակելու խնդիրը։

✦ Թիֆլիսի վաճառականութիւնը ևս առանձին հետաքրքրութիւն է ցոյց տալիս քաղաքային ձայնաւորների առաջիկայ ընտրութիւնների առիթով։ Նա իր միջից 8 անձն է ընտրել և յանձնարարել՝ բանակցութեան մէջ մտնել հարկաւոր դէպքում մեծացած խմբակների հետ և գործել համերաշխաբար։

✦ Սեպտ. 19-ին Թիֆլիսի նահանգական թատրոնում նշանակված էր ժուրնալիստ Լևան Կիպիանիի գործի քննութիւնը։ Լ. Կիպիանին մեղադրվում է տխրահռչակ «կարմիր սենակի» գործի առիթով։ Մեղադրվող Կիպիանիի՝ դատարան չը գալու պատճառով գործի քննութիւնը յետաձգվեց։

✦ Շաբաթ օրը, սեպտեմբերի 24-ին, Թիֆլիսի Հասարակական կլուբում բժ. Տ. Մնաբսկին կը կարդայ մի բեֆերատ, նուիրված սպանացի գրող Բլասկո Իբանէսի գրական խարախտերիստիկային։

✦ Եկող շաբթից կը սկսվեն ժողովրդական համալսարանի ընկերութեան դպրոցների պարապմունքները և ընկերութեան դասախօսների բեֆերատները։

✦ «Յառ.» թերթը գրում է, որ սեպտեմբերի 18-ի գիշերը երդ. հաւատարմատարի օգնական Ալ. Պապովեանի բնակարանում պահնորդական բաժանմունքի պաշտօնեաները խուզարկութիւն կատարեցին, որից յետոյ տիկ. Պապովեան և ուրիշ երկու հոգի տարվել են պահնորդական բաժանմունքը, իսկ հետևեալ օրը՝ բանտ։ Ինքը Պապովեանը, ինչպէս յայտնի է, ձերբակալված է մի ամիս առաջ։

✦ Քաղաքային դումայական մասնաժողովը էլեքտրաքարշի ընկերութիւնից պահանջել է տեղեկութիւն տալ, թէ վերջին երկու տարում ընկերութիւնը օրքան եկամուտ է ունեցել և օրքան մարդ են օգտվել էլեքտրաքարշից յիշեալ ժամանակամիջոցում։ Այդ տեղեկութիւնը մասնաժողովին հարկաւոր է էլեքտրաքարշի վագոնների թիւը առաջիկայի համար որոշելու։ Բացի այդ, որոշված է իւրաքանչիւր վագոնի մէջ ցուցանակ կախել վագոնների զանազան ուղղութեամբ երթևեկելու մասին։

✦ Էլեքտրաքարշի ընկերութիւնը Բրիւսելից ստացում է ձմեռային նոր վագոններ։

✦ Սեպտեմբերի 15-ին կովկասեան զինուորական-նահանգական դատարանը աւազակութեան համար երկու հոգու դատապարտեց մահվան պատժի։

✦ Թիֆլիսի «Լոյս» ընկերութիւնը, որը ամենաչքաւոր դասակարգի զաւակներին ձրի ուսում է մատակարարում, կամաց-կամաց հասարակութեան համակրութիւնն է սկսում վայելել, որը արտայայտվում է զանազան անձանց կողմից դրամական նուիրատուութեամբ յօգուտ դպրոցի։ Այսպէս՝ Ղլիչեան ամուսինները իրանց մօր և զոքանչի մահվան առիթով պսակի փոխարէն նուիրել են դպրոցին 10 ր., իսկ Կոստանդին Մեհրաբեանը 25 ր.։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Արքունական թատրոնում

Հաճելի էր լսել երգչուհի Շմիդտի նոր, թարմ, մաքուր և գեղգեղուն ձայնը, որով նա հանդէս եկաւ «Տրավիատա» օպերայում Արքունական թատրոնի բեմի վրա երկուշաբթի, սեպտեմբերի 19-ին։ Երգչուհին ունի համարձակ շարժումներ, ազատ խաղ։ Նրա ձայնը քնքոյշ է, մեղմանուշիւն, դիւրութեամբ տալիս է դայլայլիկներ։ Թանձր և ուժեղ ձայներից չէ. բայց իր բնաւորութեամբ, իր մշակութեամբ գրաւիչ է։

Ալֆրիդի դեր կատարող երգիչ Կոմմիսարժեվսկիի ինքնըստինքեան լաւ և թարմ ձայնի մէջ կայ մի ինչ-որ խլութիւն, որի պատճառով նա չէ կարողանում տպաւորիչ և արտայայտիչ լինել։

Թատրոնը դարձեալ լիքն էր։ Հասարակութիւնը ջերմ ծափահարութիւններով ոգևորում էր բեմի գործողներին։

II

Արտիստական թատրոնում

Լաւ է թէ վատ՝ այս տարի ռուս դրամատիկական խումբը Արտիստական թատրոնում։

Այդ հարցը տրվում է հասարակութեան մէջ։ Եւ սակայն նոյն հասարակութիւնը չէ ուզում գնալ թատրոն և ինքը իր աչքով ու ականջով համոզվել, թէ օրքան բաւարար են և իրանց կոչման բարձրութեան վրա են դերակատարները։ Իւրաքանչիւրը սպասում է, որ մի ուրիշը գնայ թատրոն և յետոյ իրան ասէ, կամ յոյսը դրել է մամուլի վրա, որպէսզի նախ կարդայ կարծիքներ և քննադատութիւններ և ապա յաճախի ներկայացումները։

Այդպէս մտածելով և դատելով Թիֆլիսի հասարակութիւնը թողել է առանց հանդիսականների դրամատիկական խմբի թէ առաջին և թէ երկրորդ ներկայացումները։ Ճիշդ է, այդ առաջին ներկայացումների համար վերցված էին չափազանց ծանօթ պիէսներ, ինչպէս են Գոգոլի «Վերաքննիչ» և Օստրովսկիի «Անօժիտը»։ բայց այդպէս է թէ մայրաքաղաքների և թէ խոշոր քաղաքների մշտական թատրոնների սովորութիւնը՝ սկսել հայրենի կլասիկների գործերից և ապա անցնել միւս պիէսներին։

«Անօժիտի» մէջ տղամարդկանց դերերը կատարվեցին աւելի աջող, քան կանացի դերերը։ Լարիսայի կենտրոնական դերը չունեցաւ արժանի կատարող։ Լարիսան, որ պէտք է իր անձնական բարեմասնութիւններով, իր գեղեցկութեամբ, իր գրաւչութեամբ, իր յափշտակվելու ընդունակութեամբ կազմէր փայլուն ատաղ պիէսի նկարագրած շրջանում, ամենևին այդպիսին չը հանդիսացաւ։ Լվովա-Լիչկօն ներկայացրեց Լարիսային իբրև մի հասարաւ մէջտանկայի, գաւառական ոչնչութիւն մի քանի յաւակնութիւններով։ Համեմատաբար աւելի աջող էին նրա մօր դեր կատարող Բուլդինան և փեսացուի մօր դերակատարը։

Տղամարդկանցից յիշատակելի են՝ Դիեվսկի (Կարօնդիշեվ), որը նպաստաւոր տպաւորութիւն թողեց և նախորդ ներկայացմանը Ալեստակօվի դերում. նա խելացի դերասան է, մտածող իր դերի մասին, վերլուծող, տիպի հոգեբանութեան մէջ մտնող։ Բօրիսով (միլիոներ Կնուրօվի դերում), որը ընդունակ է կենսական գծերով օժտել ներկայացված տիպը, Գարին (Ռօբինզոն), որը գրաւեց ամենից էնպատաստ ձեռք բերելու ժառանգութիւն մը, այլ աշխատած էլ, որ այդ ժառանգութիւնը անցնի ազգին. ոմանց պաշտօններ չէի տուած. ոմանք էի կրցած ազատել Համիդին ճիրաններէն և այլն։ Ես ցաւ զգացի միայն, երբ ազգային ժողովը կաբևորութիւն տուաւ ինծի դէմ եղած սաստ զրպարտութիւններուն, և առանց իմ կողմէն որևէ ջանք գործադրելու՝ վերահաստատելու համար համբաւս և պատիւս՝ թողուցի, որ ինք ազգային ժողովը գործէ ինչպէս կուզէ, որպէս զի ապագային չըսեն, թէ ես միջոցներ ձեռք առի զիս արդարացնելու համար։ Ամեն բան ձգած եմ իրենց և կը սպասեմ, թէ ինչ վճիռ պիտի արտասանէ ազգային ժողովը. եթէ ոչ՝ իմ ունեցած փաստերս այնքան ջախջախիչ են, որ ամեն վայրկեան կրնան անմեղութիւնս երևան հանել։ Ես կուզեմ տեսնել, թէ ազգային ժողովը ինքնին ձեռնհաս է արդարութիւն գործելու։ Մի այն ինձմէ պահանջուած բացատրութիւններն ես տուի։ Դալով քննիչ Լբժինի դէպքին, ես միանգամայն ճշմարտութիւնը յայտնեցի, երբ գրեցի, թէ այդպիսի դէպք տեղի չէ ունեցած. առաջ ելան յայտարարելու, թէ իբր քննիչ Լբժինը դիմեր է ինծի, և ես աննպաստ տեղեկութիւններ եմ տուեր անոր դաշնակցականաց մասին։ Բայց Լբժին երբէք չէ դիմած ինծի թէ ուղղակի և թէ անուղղակի, ոչ մէկ հարցում ինծի չէ ուղղուած անոր կողմէն՝ դաշնակցականաց մասին։ Ցետոյ ելան ըսին, որ դեսպան Զինովիէվի միջոցով եմ տեղեկութիւններ հաղորդեր և իբրև ապացոյց բերին Զինովիէվի գրած մէկ գրութիւնը Կովկասի Փոխարքային. այդ գրութեան մէկ պատճէնը պ. Սարուխան ուղարկեց ինծի Թիֆլիսէն, և անոր վերաբերմամբ ահա ի՛նչ կրնամ ըսել։ Նախ թարգման Նիկոլայեվ այնպէս չէ հաղորդած իմ խօսքերը, ինչպէս ես ըսեր եմ, թէ Խրիմեան կաթողիկոս պաշտօնական ոչ մէկ տեղեկութիւն ուղարկած է մեզ՝ էջմիածնի ժողովին մասին, չէ պահանջած ուղարկել ներկայացուցիչներ, որ այդ ժողովին վճիռները չեն կրնար պարտադիր ըլլալ Թիւրքիայի հայոց եկեղեցւոյ և ժողովրդի համար, քանի որ մենք չունինք ոչ մէկ ներկայացուցիչ։ Ապա ըսեր եմ, որ, ինչպէս կը տեղեկանամ Թիֆլիսի հայ լրագիրներէն և էջմիածնի ծերունի եպիսկոպոսներէն ստացած նամակներէս, ժողովը չի կրնար համբուրել եկեղեցական, քանի որ անոր անդամոց մէջ չկայ ոչ մէկ եկեղեցական ներկայացուցիչ. ըսեր եմ և այն, հիմնուելով զարձեալ վերոյիշեալ նամակներու և լրագիրներու վրայ, որ ժողովին մեծամասնութիւնը բաղկացած է դաշնակցականներէ, որոնք ծայրայեղ ծրագիրներ ունին։ Եւ միթէ այս մատնութիւն է, քանի որ Թիֆլիսի բոլոր լրագիրները հաղորդեցին։ Վերջապէս, իմ խօսքերս ինչպէս կըրնային պատճառ ըլլալ ժողովին փակման, քանի որ դեսպան Զինովիէվի գրութիւնը հասած է Փոխարքային սեպտեմբեր 6-ին, երբ օգոստոս 28-ին արդէն ժողովը փակուած և ցրուած էր։

— Սրբազան,—ասացի ես,—ձեզ դէմ այդ ամբաստանութիւնը անողը Վռամեան անունով դաշնակցականն է. այդ պարոնը առաջ գրեց Ամերիկայի «Հայրենիք» թերթին մէջ, թէ էջմիածնի կենտրոնական ժողովի փակման հեղինակները այն 7 անձինք են, որոնք բողոքեցին և հեռացան ժողովից. ապա մի քանի ժամանակ առաջ, նոյն Վռամեանը, մոռանալով իր գրածը, եկաւ և ազգային ժողովի մէջ յայտնեց, թէ ժողովի փակման պատճառը Հ. Առաքելեանն է եղել. տեսնելով որ այդ զրպարտութեան ևս հաւատացող չեղաւ, այժմ եկել և բղաւում է թէ Օրմանեանն է եղել պատճառ։ Այդպիսի ստախօսների վկայութիւնը ոչ մի փոքր ի շատէ ես ըսեր եմ, թէ Խրիմեան կաթողիկոս պաշտօնական ոչ մէկ տեղեկութիւն ուղարկած է մեզ՝ էջմիածնի ժողովին մասին, չէ պահանջած ուղարկել ներկայացուցիչներ, որ այդ ժողովին վճիռները չեն կրնար պարտադիր ըլլալ Թիւրքիայի հայոց եկեղեցւոյ և ժողովրդի համար, քանի որ մենք չունինք ոչ մէկ ներկայացուցիչ։ Ապա ըսեր եմ, որ, ինչպէս կը տեղեկանամ Թիֆլիսի հայ լրագիրներէն և էջմիածնի ծերունի եպիսկոպոսներէն ստացած նամակներէս, ժողովը չի կրնար համբուրել եկեղեցական, քանի որ անոր անդամոց մէջ չկայ ոչ մէկ եկեղեցական ներկայացուցիչ. ըսեր եմ և այն, հիմնուելով զարձեալ վերոյիշեալ նամակներու և լրագիրներու վրայ, որ ժողովին մեծամասնութիւնը բաղկացած է դաշնակցականներէ, որոնք ծայրայեղ ծրագիրներ ունին։ Եւ միթէ այս մատնութիւն է, քանի որ Թիֆլիսի բոլոր լրագիրները հաղորդեցին։ Վերջապէս, իմ խօսքերս ինչպէս կըրնային պատճառ ըլլալ ժողովին փակման, քանի որ դեսպան Զինովիէվի գրութիւնը հասած է Փոխարքային սեպտեմբեր 6-ին, երբ օգոստոս 28-ին արդէն ժողովը փակուած և ցրուած էր։

— Սրբազան,—ասացի ես,—ձեզ դէմ այդ ամբաստանութիւնը անողը Վռամեան անունով դաշնակցականն է. այդ պարոնը առաջ գրեց Ամերիկայի «Հայրենիք» թերթին մէջ, թէ էջմիածնի կենտրոնական ժողովի փակման հեղինակները այն 7 անձինք են, որոնք բողոքեցին և հեռացան ժողովից. ապա մի քանի ժամանակ առաջ, նոյն Վռամեանը, մոռանալով իր գրածը, եկաւ և ազգային ժողովի մէջ յայտնեց, թէ ժողովի փակման պատճառը Հ. Առաքելեանն է եղել. տեսնելով որ այդ զրպարտութեան ևս հաւատացող չեղաւ, այժմ եկել և բղաւում է թէ Օրմանեանն է եղել պատճառ։ Այդպիսի ստախօսների վկայութիւնը ոչ մի փոքր ի շատէ

մանց չէի նպաստած ձեռք բերելու ժառանգութիւն մը, այլ աշխատած էի, որ այդ ժառանգութիւնը անցնի ազգին. ոմանց պաշտօններ չէի տուած. ոմանք չէի կրցած ազատել Համիդին ճիրաններէն և այլն։ Ես ցաւ զգացի միայն, երբ ազգային ժողովը կաբևորութիւն տուաւ ինծի դէմ եղած սաստ զրպարտութիւններուն, և առանց իմ կողմէն որևէ ջանք գործադրելու՝ վերահաստատելու համար համբաւս և պատիւս՝ թողուցի, որ ինք ազգային ժողովը գործէ ինչպէս կուզէ, որպէս զի ապագային չըսեն, թէ ես միջոցներ ձեռք առի զիս արդարացնելու համար։ Ամեն բան ձգած եմ իրենց և կը սպասեմ, թէ ինչ վճիռ պիտի արտասանէ ազգային ժողովը. եթէ ոչ՝ իմ ունեցած փաստերս այնքան ջախջախիչ են, որ ամեն վայրկեան կրնան անմեղութիւնս երևան հանել։ Ես կուզեմ տեսնել, թէ ազգային ժողովը ինքնին ձեռնհաս է արդարութիւն գործելու։ Միայն ինձմէ պահանջուած բացատրութիւններն ես տուի։ Դալով քննիչ Լբժինի դէպքին, ես միանգամայն ճշմարտութիւնը յայտնեցի, երբ գրեցի, թէ այդպիսի դէպք տեղի չէ ունեցած. առաջ ելան յայտարարելու, թէ իբր քննիչ Լբժինը դիմեր է ինծի, և ես աննպաստ տեղեկութիւններ եմ տուեր անոր դաշնակցականաց մասին։ Բայց Լբժին երբէք չէ դիմած ինծի թէ ուղղակի և թէ անուղղակի, ոչ մէկ հարցում ինծի չէ ուղղուած անոր կողմէն՝ դաշնակցականաց մասին։ Ցետոյ ելան ըսին, որ դեսպան Զինովիէվի միջոցով եմ տեղեկութիւններ հաղորդեր և իբրև ապացոյց բերին Զինովիէվի գրած մէկ գրութիւնը Կովկասի Փոխարքային. այդ գրութեան մէկ պատճէնը պ. Սարուխան ուղարկեց ինծի Թիֆլիսէն, և անոր վերաբերմամբ ահա ի՛նչ կրնամ ըսել։ Նախ թարգման Նիկոլայեվ այնպէս չէ հաղորդած իմ խօսքերը, ինչպէս ես ըսեր եմ։ Ես ըսեր եմ, թէ Խրիմեան կաթողիկոս պաշտօնական ոչ մէկ տեղեկութիւն ուղարկած է մեզ՝ էջմիածնի ժողովին մասին, չէ պահանջած ուղարկել ներկայացուցիչներ, որ այդ ժողովին վճիռները չեն կրնար պարտադիր ըլլալ Թիւրքիայի հայոց եկեղեցւոյ և ժողովրդի համար, քանի որ մենք չունինք ոչ մէկ ներկայացուցիչ։ Ապա ըսեր եմ, որ, ինչպէս կը տեղեկանամ Թիֆլիսի հայ լրագիրներէն և էջմիածնի ծերունի եպիսկոպոսներէն ստացած նամակներէս, ժողովը չի կրնար համբուրել եկեղեցական, քանի որ անոր անդամոց մէջ չկայ ոչ մէկ եկեղեցական ներկայացուցիչ. ըսեր եմ և այն, հիմնուելով զարձեալ վերոյիշեալ նամակներու և լրագիրներու վրայ, որ ժողովին մեծամասնութիւնը բաղկացած է դաշնակցականներէ, որոնք ծայրայեղ ծրագիրներ ունին։ Եւ միթէ այս մատնութիւն է, քանի որ Թիֆլիսի բոլոր լրագիրները հաղորդեցին։ Վերջապէս, իմ խօսքերս ինչպէս կըրնային պատճառ ըլլալ ժողովին փակման, քանի որ դեսպան Զինովիէվի գրութիւնը հասած է Փոխարքային սեպտեմբեր 6-ին, երբ օգոստոս 28-ին արդէն ժողովը փակուած և ցրուած էր։

— Սրբազան,—ասացի ես,—ձեզ դէմ այդ ամբաստանութիւնը անողը Վռամեան անունով դաշնակցականն է. այդ պարոնը առաջ գրեց Ամերիկայի «Հայրենիք» թերթին մէջ, թէ էջմիածնի կենտրոնական ժողովի փակման հեղինակները այն 7 անձինք են, որոնք բողոքեցին և հեռացան ժողովից. ապա մի քանի ժամանակ առաջ, նոյն Վռամեանը, մոռանալով իր գրածը, եկաւ և ազգային ժողովի մէջ յայտնեց, թէ ժողովի փակման պատճառը Հ. Առաքելեանն է եղել. տեսնելով որ այդ զրպարտութեան ևս հաւատացող չեղաւ, այժմ եկել և բղաւում է թէ Օրմանեանն է եղել պատճառ։ Այդպիսի ստախօսների վկայութիւնը ոչ մի փոքր ի շատէ

պատաւոր մարդու համար զերօյի նշանակութիւն չունի։ Իսկ ես պէտք է յայտնեմ ձեզ, սրբազան, մի փաստ, որ գուցէ յայտնի չէ ձեզ և որ այժմ անհերքելի կերպով ապացուցված է։ Ինքն Խրիմեան կաթողիկոսն եղաւ, որ հեռագրով դիմեց Փոխարքային և աղերսեց փակել ժողովը և ցրել ժողովականներին։

Ապա մեր խօսակցութիւնը անցաւ էջմիածնի միաբանութեան վրա։ Օրմանեան սրբազան նկատեց, որ իր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, թէ էջմիածնում ներկայումս երեք կուսակցութիւն կայ. 1) հին և ծերունի եպիսկոպոսների ու վարդապետների խումբը։ Սրբազանի կարծիքով, հմուտ և հեղինակաւոր կաթողիկոսը չը պէտք է յենվի այդ կուսակցութեանց որևէ մէկի վրա, ոչ ևս հալածէ նրանց, այլ պէտք է կարողանայ երեքից նա օգտվել, ուղղելով երեքի գործունէութիւնը դէպի եկեղեցու և ազգի օգուտը և ծառայութիւնը, տալով ամեն մէկին իրան յարմար պաշտօն և աշխատանք։

— Նոյն իսկ ծայրայեղ կուսակցականներուն, իմ կարծիքով,—յարեց սրբազանը,—պէտք չէ հալածել, այլ աշխատիլ ուղիղ ճամբու վրայ դնել անոնց գործունէութիւնը։

— Ուրեմն, սրբազան,—հարցրի ես,—դուք կարծում էք, որ, եթէ կաթողիկոս ընտրվէք, կարող էք վերացնել կուսակցական ոգին էջմիածնից և հաշտեցնել ամենքին։

— Համոզված եմ, որ կարելի է ուղղել անոնց գործունէութիւնը յօգուտ եկեղեցւոյ և ազգի։ Բան մը ևս կը զարմացնէ զիս, պ. Առաքելեան,—կցեց Օրմանեան սրբազանը.—աւելի քանի մը անձանց ինծի հանդէպ ունեցած ապերախտութիւն է, անձինք, որոնց ես ոչ միայն բարոյական, այլ և նիւթական աշակցութիւն եմ ցոյց տուած կամ հիւրընկալած տունս։ Կը սպասէի, որ այդ անձինք գոնէ կօրբեկտ և արգահատանք ըլլային իմ վերաբերմամբ, մինչ, ընդհակառակը։ խիստ և անարդար յարձակումներ կընեն։ Օրինակ՝ յիշեմ գոնէ երեքը։ Մեսրոպ վարդապետ (այժմ եպիսկոպոս), Լէօ կամ Առաքել Բաբախանեան և Մեսրոպ քահ. Մելեան։ Այդ մարդկանց թշնամութիւնը և զրպարտութիւնները անհասկնալի են ինծի, մանաւանդ Լէօինը, որ ինծի հետ գրագրութիւն է ունեցեր, ինձմէ զանազան գրքեր, տեղեկագրեր և նիւթեր պահանջելու առթիւ, զորս ես հայթայթեր եմ իրեն ձրիաբար. անոր նամակներուն ոճը, բովանդակութիւնը այնպէս ցոյց կուտան. որ ինք Լէօ խորին յարգանք կը տածէ իմ և իմ գործունէութեանս նկատմամբ։ Այդ նամակները պահած եմ։ Է՛հ, Աստուած իրեն հետ։ Ես չեմ զարմանար, քանի որ նոյն իսկ Պիէր Քիւյտ, որուն օգնեցի տարիներով՝ հայթայթելով թանկագին նիւթեր իր «Pro Armenia» լրագրին համար, և ինքն ևս շարունակ նամակներով իր մեծ շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը կը յայտնէր, երբ Պոլիս եկաւ սամմանադրութենէն յետոյ՝ զլացաւ գալ այցելել ինծի՝ դաշնակցականներէն զրդուած։

Մեր տեսակցութիւնը տևեց գրեթէ 3 ժամ։ Ես հրաժեշտ տուի, խոստանալով նորից այցելել, եթէ երկար մնամ Պոլիս, բայց, դժբաղդաբար, չը կարողացայ. գուցէ երկրորդ անգամ կարողանամ այցելել, երբ վերադառնամ Իտալիայից, ուր այս երկու օրս պէտք է մեկնեմ։

Օրմանեան սրբազանից յետոյ այցելեցի Դուրեան սրբազանին, բայց այդ մասին յաջորդ անգամ։

Հ. Առաքելեան

հանդիսականների ուշադրութիւնը աջող գրիմով և տիպական խաղով։ Մենք աւելի էինք սպասում Պարատովի դեր կատարող Բելգօրոդսկիից, որը, ճիշդ է, խաղաց վայելուչ կերպով իր դերը, բայց չը տուեց մեզ այն ուժեղ և զուտաւոր տիպը, որը կաղմում է պիէսի մէջ կատարվող դրամայի առանցքը։ Սիրող

ՍԷՐ ԵՒ ԽԱՆԴ

Ռուս յայտնի հոգեբան Պ. Կովալեվսկին ռուս հոգեբանների համագումարին կարդաց մի շարք դասախօսութիւններ հոգեբանութեան մասին։

Այդ դասախօսութիւններից մէկի մէջ բերված են մարդու կեանքի այն բոլէները, երբ սէրը փոխվում է խանդի, իսկ խանդը՝ (խանդոտութիւն) յանցանքի։

Ով անկեղծ սիրում է, նա խանդոտ չէ։

Խանդը՝ դա սիրոյ հիւանդութիւնն է, իսկ սիրոյ բոլոր հիւանդութիւնները մահացու են։

Խանդոտ են ոչ միայն երիտասարդները, այլ և հասակաւորները։

Դատական աշխարհում դէպքեր են եղել, երբ 80 տարեկան ծերունին սպանել է իր 70 տարեկան պառաւ կնոջը խանդոտութեան հողի վրա։

Իսկ 40—50 տարեկան կանանց սպանութիւնները խանդից՝ յաճախ են պատահում։

ԱլիսօՅը բորբոքում է, յաճախ և բռնկեցնում է խանդի թաղված զգայմունքը։

Կանայք երբ խանդոտ են դառնում, շռընունակ շառաչում են, իսկ տղամարդիկ նմանվում են կատաղած կատուներին...

Կանանց խանդի զգացմունքը բորբոքվում է որոշ ֆիզիօլոգիական շրջաններում։ Մի պրոֆեսոր պատմում է. Պետերբուրգում ապրում էին մի բարօն, նրա կին բարօնուհին և սրա քոյրը՝ մարկիզուհին։

Բարօնուհին սկսեց խանդոտել քրոջը, թէ նա սիրաշահում է իր ամուսնուն և, գնդակահարեց նրան։

Դատական քննութիւնը պարզեց, որ մարկիզուհին՝ դեռ կոյս է, իսկ վկաները հաստատեցին, թէ բարօնը և մարկիզուհին դաստնի յարաբերութեան մէջ էին սեռային սերմնահոսութեան հողի վրա...

Բարօնուհին սպանեց մարկիզուհուն թունաւոր մտքի ազդեցութեան տակ՝ «սպանի՛ր, սպանի՛ր»...

Խանդոտները՝ հիւանդ մարդիկ են։ Նրանց պէտք է բժշկել, և ոչ թէ դատել։ Սակայն խանդոտներին չը պէտք է անուշադիր թողնել։ Եթէ մենք ուշադրութեամբ աչքի անցնենք սիրոյ պատմութիւնը ժողովրդի ասացուածների մէջ և դիմենք ժողովրդական առակներին ու ասացուածներին, կը տեսնենք, «ուր սէր՝ այնտեղ և Աստուած», «Աստուած սէր է», «ամենից լաւն այն է, որ սիրում է մէկին», «սիրոյ դէմ գնահատութիւն չը կայ», «սէրը աշխարհ արժէ», «սէրը կոյր է. ոչինչ չէ տեսնում», «սէրն սկսվում է աչքերից, աչքերով սիրահարվում են», «սէրը, կրակն ու հաղը մարդկանցից չեն կարող թաղցնել», «սէրը օղակ է, իսկ օղակը ծայր չունի», «պլատոնական սէրը միայն ցամաքեցնում է», «ոչ ուտեմ, ոչ խմեմ, միայն սիրուհուս երեսին նայեմ», և այլն և այլն։

Սիրոյ մասին այնքան գրքեր են գրված, որ եթէ այդ ամենը դասընդ իրար վրա, կարելի է ամբողջ երկրագունդը գոտի կապել, բայց և այնպէս սիրոյ հարցը մնում է չը լուծված։

Ցոյն իմաստուն Պլատոնը սիրոյն է վերագրում համայն տիեզերքի ծագումը։ Սէրը՝ դա մի ոյժ է, որ կապ է պահպանում ստեղծագործութիւնների միջև, գեղեցիկ ժպիտ է, որ փայլում է երկնքի և երկրի միջև։ Սէրը՝ դա մի կրքոտ ու անյաղթելի ցանկութիւն է, որ յափշտակում ու խառնում է ամեն կենդանին մի ամբողջութեան մէջ։ Այդ բոլորը, Պլատոնի ասելով, սէրն է։ Պրոֆ. Մանտեգացցան սիրոյ իդէալը բացատրում է այսպէս. ամենաբարձր սիրոյ, ամենաբարոյական սիրոյ իդէալը տղամարդու կողմից՝ պէտք է լինի հետևեալը. ամբողջ կեանքում սիրել միմիայն մի կնոջ և սիրել նրան մինչև գերեզման։ Կնոջ կողմից սիրոյ գերագոյն իդէալ պէտք է լինի՝ սիրել ամբողջ կեանքում մի տղամարդու և սիրել նրան մինչև յաւիտեան։

Իսկ Նօրդան բացատրում է, թէ ինչպէս է առաջ գալիս սէրը։ Նօրդան գրում է, որ մենք սիրում ենք ոչ թէ նրան, որի վրա սիրահարվել ենք, այլ մեր սեփական, մեր իսկ մշակած իդէալը, և այդ իդէալը ներշնչում ենք նրան, որի վրա կամենում ենք սիրահարվել։

Ցաւոտ սխալվում ենք և սկսում ենք ընկնել մեր մշակած իդէալի հանկից։ Պատահում է, որ գտնում ենք, և այն ժամանակ սիրային կենդանութիւնը (ամուսնութիւն) լինում է բաղդաւոր. բայց այդ պատահում է շատ, անգամ չափազանց շատ հաղուագիւտ։ Հէնց այստեղ էլ թաղնված է սիրոյ դժբաղդութիւնը։ Սէրը գերագոյն երանութիւն է, ասում են ոմանք։ Սէրը՝ անասելի դժբաղդութիւն է, ասում են ուրիշները։ Իսկ ինչ է ասլա խանդը։

Դա սիրոյ հիւանդութիւնն է։ Իսկական կիրքը աւելի երևում է սիրահարի կամ սիրուհու յարգանքի մէջ, քան կնոջ խանդի մէջ։ Խանդոտութիւնը ամենաղազիր կիրքն է։ Եթէ խանդը նպատակ ունի, նրա բոլոր միջոցները չեն մոտեցնում, այլ հեռացնում են նրան նպատակից։ Այդ ցաւը աւելի ուժեղ է այն պատճառով, որ նա վարակում է ոչ թէ մէկին, այլ երկուսին։

Դա սէր չէ։ Սէրը կիրք չէ։ Սէրը տրվում է մեզ վերևից, իսկ ամեն մի կիրք՝ երկրի ծնունդ է։ Իսկ խանդը մարդկանց հիւանդութիւնն է։ Ե.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻ
(Պատմական անհշողութիւններ)

«Մշակի» 186-րդ համարին մէջ կարդացի Կ. Պոլսէն Շառայլ ստորագրութեամբ թղթակցութիւն մը, Սուրէն Պարթևեանի ծանօթ գայթակղութեան շուրջ։

Ցայտնի կերևայ, որ «Մշակի» թղթակիցը խորապէս ցաւած մէկն է այդ գայթակղութենէն, որ այնչափ անարգ կերպով շահագործուեցաւ հակառակորդ կուսակցութեան մը թերթերուն կողմէ, ընդդէմ սահմանադրականներու։ Անշուշտ այդ է պատճառը՝ Պարթևեանի դէմ Շառայլի գործածած բուռն բացատրութիւններուն, որոնց ոչինչ պիտի ունենայի ըսելիք, եթէ միայն այդ դէպքը դատապարտելով բաւականացած ըլլար և այդ առթիւ իր զրուցեան մէջ քանի մը անճիշդ տեղեկութիւններ սպրդած չըլլային, անշուշտ ակամայ։

Այսպէս, Շառայլ կըսէ Պարթևեանի համար. «Երբեմն Հնչակեան, Մանչէսթրի մէջ հայ վանառականներու թելադրութեամբ հակայեղափոխական մը կը դառնայ, Ամերիկայի մէջ հայ կուսակցութիւններէն ամենէն աւելի ոճրապարտներէն մէկն՝ Վերակազմեալ Հնչակեանութեան կը յարի եւ Եգիպտոսի մէջ սահմանամերձ կըլլայ...»։

Իրողութիւնն այն է՝ որ Պարթևեան հընչակեան չէր, ոչ մէկ կուսակցութեան կը պատկանէր և խառնուածքով յեղափոխական մը ըլլալով հանդերձ բոլոր հայ կուսակցութիւնները հաւասարապէս կը քննադատէր՝ երբ գնաց Մանչէսթրը ու հոն հիմնեց «Վաղուան Ձայնը», ոչ թէ հայ վանառականներու թելադրութեամբ, այլ քանի մը մտաւորական բարեկամներու գործակցութեամբ, որոնց մէկն էի ես՝ Մարսէյլէն, և միւսները՝ Ա. Շաքլեան, Գ. Փառնակ և Լեոն Արսէնեան կը կոչուէին։ «Վաղուան Ձայնը» կարճատև, բայց շնորհալից կեանք մը ունեցաւ։ Վերջէն, միևնոյն աշակիցներով, հրատարակուեցաւ Պարիզի մէջ «Ժողովուրդին Համար» թերթը, որուն մէջն էր Պարթևեան, և անկէ ետքն է, որ Լոնդոն տարուեցաւ «Նոր Կեանքի» խմբագրութիւնը կատարելու, Արփիարի հեռացումէն վերջ։ Այն ատենն է, որ Վեր. Հնչակեան եղաւ և մնաց մինչև այն օրը, ուր Վեր. Հնչակեաններու ստուարագոյն մասին հետ մտաւ նորակազմ սահմ.-ռամկավար կուսակցութեան մէջ։

Իսկ թէ ինչ էր Վեր. Հնչակեանութիւնը, այդ մասին ներեցէք, որ քիչ մը լուսաբանեմ Շառայլը, որ կերևայ թէ այդ կուսակցութեան մասին իր դատաստանը կը հիմնէ այդ անունով այսօրուան օրս Պոլսոյ մէջ ինքզինքը ներկայացնող մէկ քանի հոգինոց խմբակի մը պատկերին վրայ։

Վեր. Հնչակեանութիւնը այն մեծ կուսակցութիւնն է, որ 1896-էն ետք իր մէջը պարունակեց գրեթէ ամբողջ նախկին հնչակեանները, ամեն պարագայի մէջ ամբողջ թիւրքահայ հնչակեանները, Արփիարով, Տամատեանով, Մկրտիչեանով, Ռշտունիով և Զէյթունէն վերադարձող Աղասիներովն ու Ապահներովը։ Անոր դրօշին տակ կը կը գործեն, երկար տարիներ, այն սքանչելի ազգասէրները, որոնք Մաս-Շահէն, Գարեգին Զիթճեան և Մուշեղ-Երկաթ կը կոչուին, յիշելու համար միայն մէկ քանին անոնցմէ, որոնք իրենց պարտականութիւնը կատարած պահուն՝ կեանքերնին տուին։ Այդ կուսակցութիւնը իրաւ է, թէ այլասերեցաւ ետքէն, քանի մը տարի ղեկավարուելով Արզուհանի քլիքէն, բայց կրնամ բացարձակապէս հաւատալ և պնդել, որ մինչև Աբիկ Ոնճեանի սպաննութիւնը՝ անիկա իր ծրագրովն և գործունէութեամբը կը մնար միակ լուրջ և վստահելի կազմակերպութիւնը։ Անիկա կը հակակշռէր Դաշնակցութիւնը և ինքն էր, որ, իբրև «Հնչակեան կուսակցութիւն» (առանց Վերակազմեալ պիտակ մակդիրին, որ ետքէն փակցուեցաւ իր անուան) միութեան համար կը բանակցէր Դաշնակցութեան կեդրոնին հետ։ Այդ շրջանին վերջին տարին, Աբիկ Ոնճեանի սպաննութենէն մօտ վեց ամիս առաջ, ես ինքս ալ, երբ Եգիպտոս գացի՝ անդամակցեցայ անոր, բան մը, որուն համար, եթէ ինձ զղջալ տուին յետագայ դէպքերը, այդ պահուն, սակայն, համոզուս միս կատարեալ անկեղծութեամբն էր, որ այդպէս կը շարժէի, ես ալ ըլլալով նախկին հակակուսակցական-յեղափոխական մը, Պարթևեանի պէս։

Արդ, Աբիկ Ոնճեանը զարնուեցաւ, և ասիկա անակնկալ մը եղաւ որքան ինծի՝ նոյնքան Պարթևեանի համար, առոր բացարձակ վստահ եմ։ Մեր դիրքերուն մէջ սա տարբերութիւնը միայն կար՝ որ մինչդեռ Պարթևեան Ամերիկայի ընկերական հոծ շրջանակին մէջ կը զանուէր, խմբագիրն էր կուսակցութեան օրգաններուն և հետևաբար ինքզինք բռնադատուած կը զգար կուսակցութեան կազմը պահելու համար զայն հակառակորդներու յարձակումներուն դէմ պաշտպանելու, ես, այդ մասին աւելի ազատ և արդէն ունենալով պզտիկ վէճ մը կեղբ. վարչութեան հետ, աւելի կանուխ քաշուեցայ կուսակցութենէն, որ այդ դէպքէն քիչ ետքը ենթարկուեցաւ նեբքին տապնապի մը։ Այդ տապնապը հանրութեան առջև պայթեցաւ 1907-ին, Ամերիկայի մէջ, բայց անկէ առաջ ալ, արդէն, Պարթևեան վեց ամիսէ ի վեր անկէ բաժնուեր էր։ Ամեն պաշտօն թողած ու յարաբերութիւն խզած՝ իր ապրուստը ճարելու համար իբրև արկղակալ կը ծառայէր Բոստոնի մէկ ճաշարանին մէջ։ Ցետոյ, իր նախկին ընկերներուն լաւագոյն և մեծագոյն մասը, երբ հանդիսաւորապէս խորտակեցին Արզուհան քլիքին լուծը ու զանոնք արտաքսեցին իրենց մէջէն, եկան գտան Պարթևեանը և անոր խմբագրութեամբը իբրև իրենց օրգան «Ազգ» թերթը հիմնեցին։ Արդ, «Ազգի» հրատարակութենէն ամիսներ ետքն էրյոր սպաննուեցաւ Նիւ-Եորկի մէջ Թավշանճեանը, և այդ ոճիրն էն առաջ ու էն խիստ կերպով խարանողները եղան «Ազգ» և Սուրէն Պարթևեան։ Հարկ է ըսել թէ՝ Թավշանճեանի մարդասպաններն էին Վեր. Հնչակեաններուն մէջէն արտաքսուած Արզուհանն ու իր քլիքը, որոնք Պարթևեանը սպաննելու համար ալ քիչ ջանք չէին թափած, ինչպէս խոստովանեցան ետքէն։ Հաւատալ ասոր, շատեր կան, Պոլսոյ մէջ և այլուր, որոնք Պարթևեան մեղսակից կը հաւատան ինչպէս Ոնճեանի՝ նոյնպէս Թավշանճեանի սպաննութեանց... եւ Վեր. Հնչակեան կուսակցութեան այս մեծագոյն և առողջ մասն էր ան, որ իր «Ազգ» թերթով ճուլուեցաւ հայ սահմ.-ռամկավար կուսակցութեան մէջ, երբ ան հիմնուեցաւ օսմ. սահմանադրութենէն վերջ, նախաձեռնութեամբ Տամատեանի, Մկրտիչեանի, Մալէզեանի և Ռշտունիի պէս նախկին հնչակեաններու (վերակազմեալ՝ եթէ կուզէք) և մինչև այն ատեն չէզոք մնացած ուրիշ հայերու, որոնց միացանք Ամերիկայէն «Ազգը» և Պոլսէն՝ հա-Ուրեմն, արդար չէ իբրև գունափոխութիւն մը Պարթևեանի մեղադրել այն կէտն ալ՝ թէ Վեր. Հնչակեան մը ըլլալէ ետք՝ դարձած եղած է սահմ.-ռամկավար։ Թիւրքիոյ քաղաքական նոր կացութեան համապատասխան նոր ծրագրով միակ կուսակցութիւնն է սահմ.-ռամկավարը և այդ ծրագիրը երկնած կամ անոր յղացման մասնակցած ըլլալնին՝ կընայ միայն արժանիք մը ըլլալ նախկին յեղափոխական, իմա Վեր. Հնչակեան կուսակցութեան պատկանող անձերու։

Այս՝ պատմութիւն է, որ կընայ և պէտք է ծառայէ բոլոր անոնց, որոնք ազգային խնդիրներով կը զբաղին։

Կուզէի բառ մըն ալ ըսել այն նախադասութեան դէմ, որով Շառայլ կընդունի, իբրև ստոյգ և իրեն ծանօթ իրողութիւն մը, թէ Պարթևեան «կնոջ մը միամտութիւնը շահագործած է զայն հրապուրելով»։ Իրողութիւնը, որքան ես գիտեմ, կը հերքէ այս հաւատումը և գուցէ հակառակն է ըսուածին, բայց իրաւունք չունիմ այս մասին աւելի որոշ խօսելու և կը թողում, որ ժամանակը ինքը պէտք եղածը ընէ, մոռցնելով Պարթևեանի անհատական կեանքին այս ցաւալի դրուագն և միայն անոր արուեստագէտ-դրագէտի եզական տաղանդը գուրգուրագին յիշեցնելով ամենուն։

Վահան Թէքէեան

Կ. Պոլիս, 3/16 սեպտեմբեր

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Վիէննայից հեռագրում են, որ բոլգար, մակեդոն և ալբան յեղափոխական կոմիտէները համաձայնութիւն են կապել Թիւրքիայի դէմ միացեալ ոյժերով կռուելու համար։

— Պարսկաստանի խառնակ վիճակը մնում է միևնոյնը։ Մահմէդ-Ալիի փախուստից, նրա երկու հզօր աշակիցների լիակատար պարտութիւնից յետոյ, զանազան տեղերում դեռ շարունակում են մեծ անհանգստութիւն պատճառել իրանց արշաւանքներով զանազան բէկեր ու խաներ, որոնց դէմ կառավարութիւնը ուղարկում է փոքրիկ զօրագնդեր։ Հաղորդում են, որ ներկայ տարում դրութեանը վերջ դնելու նպատակով, մէջլիսի գաղանի մի նիստում որոշվել է խնդրել օգնութիւն Թիւրքիայից։

— Դուշկովը յայտնել է, թէ Կիէվի պահնորդական գործը իր բովանդակ մանրամասնութեամբ կը բացայայտվի Պետական Դումայում։

— Ներկայ նստաշրջանում Կոկովցեվը Դումային է ներկայացնելու մի օրինագիծ, որով քաղաքները և զէմստվոները ստանալու են կրկնապատիկ օժանդակութիւն պետական գանձարանից։

— Պետական Դումայում աշակողմեանները նացիոնալիստների հետ հանդէս են գալու հրէական ու ֆիննական հարցերի առիթով։

— Ս. Սազոնովը Պետերբուրգ կը վերադառնայ հոկտեմբերի սկիզբներին և կը ստանձնէ արտաքին գործերի մինիստրի պաշտօնը։

— Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստր Տիմաշեվի հրաժարականը որոշված է բաւարար մտքով։

— Պրոֆէսոր Էբլիխը այժմ աշխատում է քաղցկեղ հիւանդութեան դէմ միջոց հնարելու վրա։ Նա կատարում է մի շարք փորձեր, որոնք տալիս են դրական հետևանքներ։

— Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտը յետ ընդունեց արձակված ունկնդրուհիներից 196 հոգու։

— «Ս. Բ.»-ի մէջ «Գ. Ն.» ստորագրութեամբ մի պարոն Մոսկվայի կաթողիկոսական ծխական ժողովի առիթով բերել է Օրմանեանի այն նամակը, որի մէջ Կ. Պոլսի նախկին պատրիարքը իր կարծիքն է յայտնում Էջմիածնում 1906 թ. կայացած համագումարի մասին յարձակվելով դաշնակցականների վրա։ Ինչպէս յայտնի է, յիշեալ նամակը Կ. Պոլսի ռուսաց նախկին դեսպան Զինովիեվը ուղարկեց Կովկասի Փոխարքայի յայտնի պաշտօնեաներից մէնին։ Ցոդուածագիրը ասում է վերջում, որ Օրմանեանի վերոյիշեալ նամակը կցված է «Դաշնակցութեան» գործին։ Ի միջի այլոց ասենք, որ «Ս. Բ.» թերթի միևնոյն համարում տպագրված են Օրմանեանի և Կարապետ եպիսկոպոսի լուսանկարները։

— Իրլանդիայում երկաթուղային գործադուլը վիժեց։ Բանուորները տէրերի պահանջով ներողութիւն խնդրեցին և աշխատանքները վերսկսեցին։

— Զինաստանում յեղափոխական շարժումը օրէ-օր նոր նուաճումներ է անում։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԿՈ

Արևելեան պարերը առհասարակ հետաքրքրութիւն են առաջ բերել քաղաքակիրթ աշխարհում։ Մասնաւորապէս Եւրօպայում և Ամերիկայում վերջերս չափազանց շատ սկսեցին հետաքրքրվել դրանցով, որպիսի երևոյթը ունի իր պատճառները։ Սուլթան Աբդուլ-Համիդի գահընկէցութիւնից յետոյ մի տեսակ ոգու առաջ եկաւ, և այդ կայանում է նրանում, որ եւրօպացիներն ու ամերիկացիները սկսեցին խոշոր չափերով հետաքրքրվել գլխաւորապէս հարեմական պարերով։ Ստեղծվեց մի ամբողջ շիօլա, որը այդ ուղղութեամբ սկսեց գործել։

Մեկուսինայի երկրպագուներից շատ դեբատներ յատկապէս սկսեցին ուսումնասիրել հարեմական կեանքն ու պարերը, որպիսիներից մէկն եղաւ, ի միջի այլոց, հայազգի դերասանուհի Արմէն Օհանեանը։ Ոչինչ մենք գիտենք, Թիֆլիսում դեռ ևս եղած չէ որևէ դերասանուհի, որը պարէր հարեմական պարեր։ Սեպտեմբերի 19-ին, Մոսկվայեան փողոցի վրա գտնվող «Մօդերն» թատրոնում մենք առիթ ունեցանք տեսնելու այդ ժանրի դերասանուհի Էլսարեմէ-խանումին, որը արևելեան և մասնաւորապէս հարեմական պարերը ուսումնասիրել է Կ. Պոլսում, ապրելով այնտեղ երկար ժամանակի ընթացքում, և առաջնակարգ հարեմների հետ շփումն ունենալով՝ կարողացել է իւրացնել այդ ինքնին բարդ ձևերը։ մանաւանդ աջող կերպով սովորել է հարեմի կնոջ հոգեկան աշխարհի յուզումներն ու խոհերը արտայայտել դիմագծերով, միմիկայով։ Նրա միմիկային շարժումները պարունակում են մի յայտնի աստիճանի աշխոյժ, կենդանութիւն և, որ գլխաւորն է՝ արտայայտում են այս կամ այն ցանկութիւնը, որը անհրաժեշտ պարագայ է այս արուեստի համար։ Էլսարեմէ-խանումը պլաստիկայի մէջ բաւական աջողութիւն ունի, որը պատճառում է էստետիկ զգացմունքին բաւականութիւն։

Առանձնապէս մենք հաւանեցինք «Արաբուհու աղօթքը իր նշանածի համար» պարը։ Եգիպտական յայտնի որովայնապարը թէև հետաքրքրական է, բայց նա մեզ նման կիսանահապատական ժողովրդի վրա թողնում է ճնշիչ տպաւորութիւն, առաջացնելով ամօթի զգացմունք։ Մենք առիթ ենք ունեցել տեսնել դրա խմբական պարը, որը աւելի ամբողջական տպաւորութիւն է գործում հանդիսատեսի վրա, քան մէկ հոգու պարելը։ Էլսարեմէ-խանումը պարերի ժամանակ երբեմն հանդէս է գալիս բլազիլեան տեսակի թունաւոր խոշոր օձով, որը կատարելապէս ենթարկվում է տիկնոջը, որպէս մի անշունչ իր, չը նայած իր վտանգաւորութեանը։ Տիկինը տիրապետում է թիւրը և արաբ լեզուներին, որով և կարողանում է երգել։ Այս ժանրի պարերը նորութիւն են մեզ թիֆլիսցիների համար և ցանկալի է նրանց տեսնել աւելի նպաստաւոր պայմաններում և շքեղ տարազ ու կարգի ու մեծ բեմերի վրա։ Գ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Սամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍԱԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Գ. Մ. ՀԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ականջի և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓԻՐԱԶՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկատաս.։
ԿԻՆ ԲԺՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐԶԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Գ. Ե. ԳՈՒՐԳԻՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆՆԵՐ՝
ԿԻՆ ԲԺՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐԶԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Զբաղուները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ռ. Նաւասարդեան
3. 0—95

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելամինսկայա փողոց, № 8.
(Կ. Չ.) 416. 100—43

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՑՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՒՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆոն 388.
(Կ.Չ.ու.) 761. 100—18

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՈՇՈՐ ՍԻՒՐՊՐԻԶ
Կեանքի մէջ մէկ անգամ !!!
600 ԱՌԱՒԱՐԿԱՆՆԵՐ միայն 3 ր. 90 կ.
1. Շքեղ ժամաց.-անկէր՝ ուղիղ ընթացքով, 6 տ. երաշխաւորութեամբ։
2. Կանացի գեղեցիկ մատանի ամերիկ. ադամանդով։
3. Կանացի ուռուցագեղ մանեակ բազմաթիւ մարգարիտներով և պատենտային փականով։
4. Կանացի օղեղ եւ էլեգանս ապարանչան ամերիկ. «Դուբլէ» ոսկուց։
5. Դրպանի օղեղ նէխէսկէր՝ 4 առարկայ։
6. Մի զոյգ օղ՝ ամերիկ. ադամանդ. և պատ. փականով։
7. Էլեգանս եւ օղեղ կասուկ պրտեմօնէ։
8. Ալբոմ՝ 50 հեսաբրէ. տեսարաններով։
9. Դ-ր ԿՕԽԻ ծխափող-ապարատ անվնաս ծխելու համար։
10. Մանեակ. ծալվող մկրատ՝ շքեղ փուլերի մէջ։
11. Նոյնպէս եւ 500-ից աւելի հեսաբրէ. եւ օգտակէս առարկաներ։
Բոլոր 600 առարկաների համար, հաշուելով և ժամացոյցը, առնում ենք միայն 3 ր. 90 կ. (ժամացոյցն առանձին արժէ նոյն գինը)։ Վերադիր վճ. ուղարկելուց սկսեալ մինչև 3 գարնանուրի համար հաշվում է 55 կ., Սիբիր՝ 95 կ.։ Հասցէն՝ O-ву «МЕРКУРІЙ», Лодзь. З. 46.
Զը հաւանածները յետ ենք ընդունում ու փողը վերադարձնում։ Թղթակցել ռուսերէն։
(В. 60485) 882. 8—3

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գ. ԵՒ Մ.
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ
Նիկոլաևսկայա, 36, Վօրօնցօվի արձանի մօտ։ Դիւանատունը բաց է երեկոյեան ժամը 4—6-ը։
(ա. օ.) 818. 25—23

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաները են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., զերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թղթակցութիւն. 3) Քաղաքացիական իրաւունք (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թղթակցութիւն հոմանիշի վրա. 7) Գրաքննչագրութիւն, արագագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) Ossur լեզուներ. 2) սղագրութիւն. 3) գակիլլոգրաֆիա (ըմբռնող և ուր.) և 4) առևտր. տպագիր. 1) Ossur լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Բացվում է կանանց յատուկ բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտ. 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտ. 1-ից առ. 10—12 և եր. 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում։
(Չ.ու.կ.) 861. 0—8 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.